AZG
armenian newspaper

Ապրիլ 16. 1991
երեքշաբթի

եռօրեայ թերթ
Ա տարի. թիւ 18
գինը՝ 30 կոպ.

հասցէ՝
Երեւան 375010,
Ալավերդեան 47
հեռ. 58-1841
ֆաքս (8-852) 56-2941

Ավելի մեծ ուշադրություն fուրդ փախստականներին

Հետզհետե միջազգային ավելի մեծ ուշադրության են արժանանում Իրաքից փախած միլիոնավոր քրդերը թե՛ Իրանում եւ թե Թուրքիայում: Ուշադրություն՝ ոչ միայն նյութական, այլ նաեւ քաղաքական:

Այսպես, ՄԱԿ-ի ներկայացուցիչների մի ստվար խումբ կիրակի օրը ժամանելով Իրաքի, Իրանի եւ Թուրքիայի մայրաքաղաքները, երեկ սկսեցին բանակցություններ վարել տեղի իշխանությունների հետ, լուծելու համար գաղթականների գոյավիճակի հետ կապված հարցերը:

Ամենակարեւոր բանակցությունները տեղի ունեցան Բաղդադում, որտեղ նախորդ օրը Սադդամ Հուսեյնը հայտարարել էր, թե ինքը «օգնելու է» փախստականներին՝ վերադառնալու իրենց բնակավայրերը...

Ինչ վերաբերում է Թեհրանում կայացած խոսակցություններին, հանդիպումից հետո պատասխանելով լրագրողների հարցերին, արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին հայտնեց, որ իր կառավարությունը ոչ մի սահմանափակում չի դնի միջազգային օգնության առաջ, քանի որ, ավելացրեց, փախստականների կարիքները այնքան մեծ են, որ Իրանն առանձին չի կարող հոգալ դրանք:

Իր հերթին, Թուրքիայի կառավարությունը կիրակի օրը որոշեց իր տարածքում ապաստան գտած շուրջ 700 հազար քրդերից մի մասին լեռնային վայրերից փոխադրել ավելի տանելի պայմաններ ունեցող շրջաններ:

«Դեմոկրատական Ռուսաստան»ի պլենումը. հրատապ է արդյոք «Գորբաչովը պետք է հրաժարական տա» կարգախոսը

Մոսկվայում տեղի ունեցավ «Դեմոկրատական Ռուսաստան» շարժման ներկայացուցիչների խորհրդի պլենումը: Երկրում տիրող իրավիճակի մասին ելույթ ունեցավ շարժման կոորդինացիոն խորհրդի համանախագահ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Յու. Աֆանասեւը: Նա ուշադրություն հրավիրեց այն բանին, որ շարժման որոշ հայտնի ներկայացուցիչներ, մասնավորապես Գ. Ստարովոյտովան, Ն. Տրավկինը եւ ուրիշները վերջին ժամանակներս հրաժարվել են ԽՍՀՄ պրեզիդենտի հրաժարականի մասին կարգախոսից, այն բանից հետո, երբ միեւնույն կարգախոսը առաջարկվել է «աջերի» կողմից:

Յու. Աֆանասեւի կարծիքով, այժմյան իրավիճակում ԽՍՀՄ պրեզիդենտի հրաժարականի վերաբերյալ «Դեմոկրատական Ռուսաստանի»- կարգախոսը ընդհակառակը՝ դառնում է խիստ հրատապ, քանի որ Շարժումը պայքարում է ոչ թե սոսկ ղեկավարի, այլեւ հանուն իշխանության կառուցվածքի փոփոխման: Միաժամանակ, ըստ Յու. Աֆանասեւի, պահանջելով ԽՍՀՄ պրեզիդենտի հրաժարականը, «Դեմոկրատական Ռուսաստանը» չպետք է նրան «նեղը լծի», քանի որ Մ. Գորբաչովը *«ապագայում կարող է հաջողությամբ գլխավորել Ֆեդերացիայի խորհրդի աշխատանքը, որի պարտականությունները արմատապես կվերանայվեն»*:

Պլենումի նախօրյակին Ռուսաստանի Հանրապետական կուսակցությունն ու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը միասին մշակել էին քաղաքական ուժերի «կլոր սեղանի» նախագիծը, որի աշխատանքն անհրաժեշտ է սկսել անհապաղ: «Կլոր սեղան» հրավիրելու բանակցություններին, ըստ առաջարկված նախագծի, կարող են մասնակցել այժմյան միութենական ղեկավարները, հանրապետությունների ղեկավարները, մասսայական դեմոկրատական շարժումների, անկախ բանվորական կազմակերպությունների, ԽՄԿԿ-ի, արդյունաբերողների եւ ֆերմերների միավորումների ներկայացուցիչները:

Յու. Աֆանասեւը կարծում է, որ «Դեմոկրատական Ռուսաստանը» պետք է դրականորեն գնահատի «կլոր սեղանի» գաղափարը: Սակայն դա չի նշանակում, որ այն պատրաստ է անմիջապես նստել այդպիսի «սեղանի» շուրջը: Ըստ Յու. Աֆանասեւի, «Դեմոկրատական Ռուսաստանի» ներկայացուցիչների «կլոր սեղանին» մասնակցելու պայմանները պետք է լինեն երկու պարագաներ՝ իշխանությունը հանձնելու միջոցների մասին պայմանավորվածություն եւ խոսակցություն հավասարը հավասարի հետ, որը հնարավոր է միայն «Դեմոկրատական Ռուսաստանի» եւ բանվորական շարժման սերտ համագործակցության դեպքում:

«Դեմոկրատական Ռուսաստան» շարժման ներկայացուցիչների խորհուրդը հայտարարեց նաեւ, որ «կլոր սեղանի» օրակարգում պետք է մտցվեն հետեւյալ հարցերը.

1) Նախարարների կաբինետի հրաժարականը եւ ժողովրդական վստահության անցման շրջանի կառավարության կազմումը

2) միութենական իշխանության նոր մարմինների ստեղծման ժամկետներն ու ձեւերը

3) ԽՍՀՄ պրեզիդենտին իր լիազորություններից ժամկետից շուտ զրկելը:

Պլենումը որոշեց «Դեմոկրատական Ռուսաստան» շարժման երկրորդ համագումար հրավիրել Մոսկվայում 1991թ.-ի հունիսի 1-2-ը: □

Բուշը երկընտրանքի առջեւ: Ապրիլ 15-ի «ՆՅՈՒԶՈՒԻՔ» շաբաթաթերթի շապիկին պատկերված քուրդ փախստական աղջնակը հարցնում է. «Ինչո՞ւ նա չի ուզում օգնել մեզ»:

Ջոն Մեյջորը բացառում է ուժի գործածությունը

Մյուս կողմից Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորը, որ առաջինն էր անցյալ շաբաթ հրապարակ նետել, քրդերի համար հյուսիսային Իրաքում «ազգային օջախ» ստեղծելու հարցը, երեկ մամլո ասուլիսում ետդարձ կատարելով հայտարարեց, թե բացառվում է ուժի գործածությունը իրաքյան քրդերին պաշտպանելու հարցում: Ավելին, նա հայտարարեց, թե ինքը բավարարված է քրդերի վերադարձին օգնելու մասին նախագահ Սադդամ Հուսեյնի խոստումով: Իսկ ինչ վերաբերում է քրդական «ազգային օջախ» ստեղծելու հնարավորությանը, Ջոն Մեյջորն ասաց, թե այդ հարցը պետք է լուծվի դիվանագիտական ճանապարհով, տեւական ժամանակի ընթացքում: □

«Հայերը սիրում են, որ իրենց իշխեն», ասում է Ադրբեջանի փոխնախագահը

Բաքվի հեռուստատեսությունն ամեն օր որեւէ ակնարկով, հայտարարությամբ կամ որոշումով անդրադառնում է Ղարաբաղի խնդրին, միշտ ենթատեքստում սպառնալիք դնելով եւ տուժած կողմ ձեւանալով:

Ադրբեջանի Գերագույն խորհրդի վերջերս կայացրած հակահայ որոշումից հետո (ըստ այդ որոշման, Սումգայիթի եւ Բաքվի ազերիները մեծ արտոնություններով պետք է գան «բնակվեն Ղարաբաղում») կեղծիքն ավելի ընդգծված ձեւեր է ընդունում:

Ապրիլի 13-ին «Ասատան» վերնագրով 50 բոպեանոց մի հաղորդում է կազմակերպվել հեռուստատեսությամբ: Հաղորդմանը մասնակցում էին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Թամերլան Կարաեւը, ժողպատգամավոր Ռամիզ Ֆաթ-Ալիեւը եւ Լաչինի տարածքի ՕՄՈՆ-ի ղեկավար Ռովշան Սավադովը:

Կարաեւն ու Ֆաթ-Ալիեւը Շուշիում վթարի ենթարկված ուղղաթիռի առիթով եղել էին դեպքի վայրում, հանդիպել շուշեցի ազգակիցներին եւ, հարցումներ անելով, պատկերացում կազմել Ղարաբաղի ներկա կացության մասին: Ըստ այդ պատկերացման, նրանք հայտարարում են, որ արտակարգ դրություն կոչվածը Ղարաբաղում ձեւական բնույթ ունի. զինվորները գործնական ոչինչ չեն անում, այդ իսկ պատճառով հայերը լարված են պահում իրավիճակը, անօրինականություններ թույլ տալիս, մի խոսքով՝ ինչ ուզում անում են: Նրանք միաժամանակ մտահոգություն են արտահայտում, թե իբր դեպի Ղարաբաղ հայերի համար մեծ քանակությամբ շինանյութ է գնում, հայերը կառուցում են, իսկ իրենք՝ փակ ճանապարհների պատճառով, չեն կարողանում շինանյութ մատակարարել Ղարաբաղի ադրբեջանական գյուղերին:

Անցնելով բուն ասելիքին՝ ադրբեջանական իշխանությունների ներկայացուցիչները հայտնեցին, թե Ադդամում վիթխարի քանակությամբ ապրանք է պահեստավորվել, հատկապես շինանյութ, որը պետք է ուղարկել մարզի տարածքի իրենց հայրենակիցներին: Առաջին անգամն է, որ պետական ներկայացուցիչն այդքան բացահայտ սպառնագին հայտարարում է, թե իրենք իշխանություն եւ կարգուկանոն կհաստատեն իրենց ուժով, կարգուկանոն կհաստատեն իրենց ուժով, եթե զորքը դա չի անում:

Եթե հիշենք օրեր առաջ Մութալիբովի այն հայտարարությունը, թե իբր հայերը կամավոր թողնում են Ղարաբաղը եւ պետք է նպաստել դրան, բացելով ճանապարհները, ապա պարզից էլ պարզ է դառնում այս հեռուստահաղորդման նպատակը:

Հեռուստահաղորդումն անդրադարձավ նաեւ երկաթուղու խնդրին: Իբր քանի որ երկաթուղուց միայն հայերն են օգտվում, դրա համար իրենք ստիպված են այն տանել Ադդամ. *«Տեսնենք հայերն ինչպես են գալու Ադդամ, որ բեռները տանեն»*, իրենն չզսպելով՝ չարությամբ նետում է Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը:

շարունակությունը՝ տես էջ 8

Կառավարական փոփոխություններ Քուվեյթում

Տեղի տալով հասարակական կարծիքի եւ ընդդիմադիր կազմակերպությունների ճնշմանը, Քուվեյթի Էմիրի կարգադրությամբ երեկ կառավարության անդամների փոփոխություն կատարվեց Քուվեյթում: Նույն՝ Սաբահ ընտանիքին պատկանող չորս նախարարներ, որոնց թվում՝ պաշտպանության եւ ֆինանսների նախարարները, պաշտոնանկ արվեցին:

Կառավարության բարերը, որը հայտարարեց այս մասին, չհայտնեց նոր նախարարների անունները: □

Խոմեյնիի որդին հրաժարվում է

Իրանի հանգուցյալ կրոնապետ Այաթոլլահ Խոմեյնիի որդին՝ Ահմադ Խոմեյնին, որին վերջերս վստահվել էր այս երկրում խիստ կարեւոր նկատվող՝ դեպի Մեքքա ամենամյա ուխտագնացության կազմակերպիչ պատասխանատուի պաշտոնը, երեկ հրաժարական ներկայացրեց իրանյան իշխանություններին, պատճառաբանելով, թե իր մոր հիվանդության պատճառով այլեւս չի կարող զբաղվել այդ գործով:

Հիշեցնենք, որ Ռամադանի տոնի առթիվ երկու տարի տեւած խզումից հետո, այս տարի 40 հազար իրանյան ուխտավորներ առիթ էին ունեցել Մեքքա այցելելու, Սաուդյան իշխանությունների բույլտվությամբ: □

Եւրոպական դրամատուն Արեւելյան Եւրոպային եւ ԽՍՀՄ-ին օգնելու համար

Լոնդոնում հանդիսավոր պայմաններում երեկ բացվեց Եւրոպական դրամատունը, որի առաքելությունն է լինելու օգնել Արեւելյան Եւրոպայի երկրների ու Խ. Միության վերակառուցման ու կարգացման գործին:

22 միլիարդ դոլլարի ընդհանուր դրամագլուխ ունեցող այս նոր դրամատունը, որի գաղափարն առաջինը հղացել էր Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆրանսուա Միտերանը, կայի պրեզիդենտի դեր է կատարելու վերոհիշյալ տալիպատորի դեր է կատարելու վերոհիշյալ երկրների տնտեսության զարգացման համար:

Նորաստեղծ դրամատան նախագահ Ամերիկեան մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ դրամատան վարկերի 40 տոկոսը հատկացվելու է անհատական-սեփական մարդին, իսկ մնացյալը՝ Արեւելյան Եւրոպայի երկրների եւ Խ. Միության ենթակառույցների զարգացմանը եւ գոյապահպանական ծրագրերի իրականացմանը:

Դրամատան բացման հանդիսությանը ներկա գտնվեցին տնտեսապես զարգացած 20 երկրների ղեկավարներ եւ բացմաթիվ ուրիշ երկրների ֆինանսների նախարարներ: Բացման ճառն արտասանեց նախագահ Միտերանը: □

digitised by A.R.A.R.@

Համերգ՝ նվիրված Բարեգործականի 85-ամյակին

Ապրիլի 12-ին «Արամ Խաչատրյան» Մեծ համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի Ֆիլհարմոնիկ սիմֆոնիկ նվագախմբի համերգը՝ նվիրված Հայկական Բարեգործական ընդհանուր միության հիմնադրման 85-ամյակին:

Համերգից առաջ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանն անդրադարձավ ՀԲԸՄ

պատմությանը, նշեց հայապահպանության գործում նրա խոշոր դերը եւ առանձնահատուկ այն օգնությունը, որ նա ցույց է տալիս մայր Հայաստանին երկրաշարժից հետո:

ՀԲԸՄ-ի նախագահ, նվագախմբի պատվավոր պրեզիդենտ տիկ. Լուիզ Մանուկյան Սիմոնը նվագախմբին տրամադրել է 100 հազար դոլլար:

Լորիս Ճգնավորյանը ներկաներին հրավիրեց ապրիլի 23-ի երեկոյան Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրի մոտ կայանալիք հիշատակի երաժշտական երեկոյին:

Այնուհետեւ հնչեցին արդեն ավանդական դարձած «Հայր Մեր»-ը եւ «Մեր Հայրենիքը»:

Համերգին մասնակցում էր շնորհալի դաշնակահարուհի, 1980 թվականի Լայպցիգի ցոհան Ս. Բախի անվան միջազգային մրցույթի դափնեկիր Անահիտ Ներսիսյանը, որը բազմաթիվ համերգներ է ունեցել Գերմանիայում, Ավստրիայում, Կանադայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում եւ այլուր:

Կատարվեցին Բրամսի «Հայդնի թեմայով վարիացիաներ»ը, Բեթհովենի դաշնամուրի եւ նվագախմբի համար 3-րդ դոմինոր կոնցերտը, Սիբելիուսի 2-րդ ռեմաժոր սիմֆոնիան: Համերգը ծրագրվածից շատ ավելի երկար տեւեց, քանի որ հիացած հանդիսականները նորից ու նորից «բիս» էին կանչում: Համերգը եզրափակվեց Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից դրվագների կատարմամբ, որից հետո նորից կատարվեց «Մեր Հայրենիքը»:

ԼԱԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Երվանդ Քոչարի թանգարանի տնօրեն. *«Մեկ խոսքով կուզեի բնութագրել նվագախմբի եւ մասնավորապես Անահիտ Ներսիսյանի կատարողական մակարդակը՝ հրաշալի է: Խորին շնորհակալություն մաեստրո Ճգնավորյանին այսպիսի երաժշտական դասերի համար, նրա անսահման նվիրվածության համար»:*

ՀԱՅԿ ՋԱՒՈՅԱՆ, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր. *«Առաջին անգամ չէ, որ հաճախում եմ ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգին: Շատ ուրախալի է, որ հանրապետությունում ստեղծագործում է այսպիսի նվագախումբ, դասական երաժշտություն է մատուցում, հարստացնում մեր հոգեկան աշխարհը, եւ կարողանում ներդաշնակ պահել մեր ժողովրդին ամբողջ աշխարհի ժողովուրդների հետ»:*

Համերգից հետո կայացած կարճատեւ զրույցի ժամանակ պրն. Ճգնավորյանն ասաց, որ *«այն ՀԲԸՄ-ի 85-ամյակին նվիրելը՝ հարգանքի տուրքն է սփյուռքահայ այն կազմակերպությունների, որոնք ծընունդ առան գաղթի տարիներին եւ կոչված էին պահպանելու հայկականը:*

Բարեգործականն այդպիսի կազմակերպությունների թվում է, եւ հիրավի անգնահատելի է նրա դերը հայապահպան գործում:

Մենք արդեն նվիրել ենք մեր նախորդ համերգներից մեկը մի այլ սփյուռքահայ կազմակերպության՝ ՀՕՄ-ին, իսկ մայիսյան համերգներից մեկը պիտի նվիրենք Թեքեյան մշակութային միությանը»:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆ

«ԱՌԱՋՆՈՐԴԻ» ԱՐՋԱՆԸ՝ ՈՉ ԵՒՍ Է

Ապրիլի 13-ին Երեւանի Հանրապետության հրապարակից հանվեց Վ. Լենինի արձանը:

Այն տեղավորվեց հատուկ մեքենայի վրա, որը նախապես ծածկված էր փափուկ բարձերով, եւ դուրս բերվեց հրապարակից անհայտ ուղղությամբ:

Հավաքված մի քանի հազար երեւանցիներ վանկարկումներով եւ սուլոցներով էին արտահայտում իրենց վերաբերմունքը այդ արարողության նկատմամբ:

Ապամոնտաժումը, որ տեւեց մոտ երկու ժամ, ավարտվեց ժամը 18-ին:

Երեւանի քաղաքապետ Համբարձում Գալստյանը, պատասխանելով թղթակիցներից մեկի հարցին, ասաց. *«Խորհրդանշական է, որ ծառատունկն ավարտվում է այս ծիսական ակտով, ծառը տնկում են, մոլախոտը՝ հանում»:*

«Միսական ակտին» ներկա էին ժողպատգամավորներ Տեր Հուսիկ քահանա Լազարյանը, Վ. Սիրադեղյանը, Պ. Հայրիկյանը եւ ուրիշներ: □

լուսանկարները՝ Լ. ԱՐՍԵՆՅԱՆԻ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐԸ ՍՐՎՈՒՄ Է

Ստավրոպոլում տեղի ունեցած բասկետբոլի տղամարդկանց ԽՍՀՄ 2-րդ խմբի առաջնության հերթական փնջային մրցաշարում՝ Երեւանի «Ուրարտուն» երկուական անգամ մրցեց Ստավրոպոլի եւ Բաքվի հավաքականների հետ: Մրցաշարից առաջ մեր թիմին ծանր կացության մեջ դրեց օլիմպիական չեմպիոն Վիկտոր Պանկրաշկինը: Անընդհատ խմելու, ռեժիմը խախտելու, մարզումներին չներկայանալու համար ակումբը ստիպված էր ամենավճռական պահին հրաժարվել նրանից:

Հատկապես անհաշտ մրցակցությունում անցան «Ակինեֆթեքիմի» հետ «Ուրարտուի» երկու հանդիպումները: Անցյալ տարի մեր թիմը խոշոր հաշվով հաղթել էր այդ թիմին: Այս անգամ «Ուրարտուն» առաջին խաղում կիջեց 75:78 հաշվով, իսկ երկրորդում ռեւանշի հասավ 80:78 հաշվով: Ստավրոպոլի թիմի հետ հանդիպումներում նույնպես կողմերը մեկական հաղթանակ տարան:

Հիմա Ստավրոպոլի հավաքականը 7 խաղից հետո ունի 5 հաղթանակ, իսկ «Ուրարտուն» նույնքան խաղից հետո ձեռք է բերել 4 հաղթանակ: Մրցանակային տեղերի հավակնորդներ են նաեւ Լենինգրադի «Սվետլանան» եւ Ալմա-Աթայի ԲՄԱ-2 թիմը:

Հաջորդ փնջային մրցաշարը «Ուրարտուն» ապրիլի 25-ից 28-ը անցկացնելու է Մինվոդի քաղաքում, որտեղ կրկին մրցելու է Լենինգրադի «Սվետլանայի», Մինվոդի եւ Ստավրոպոլ քաղաքների հավաքականների հետ, իսկ վերջին փնջային մրցաշարում, որը մայիսի 9-ից 12-ը կանցկացվի Երեւանում, «Ուրարտուի» հյուրերը կլինեն Ալմա-Աթայի ԲՄԱ-2-ը եւ Կրասնոյարսկի թիմը:

ՏԻԳՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Դինամո» համամիութենական մարզական ընկերության արագ ճատրակի առաջնությանը, որը տեղի ունեցավ Մոսկվայում, Հայաստանից մասնակցում էին 4 ճատրակորդներ: Չորս օրյա համառ պայքարում հաղթող ճանաչվեց կիրովականցի սպորտի վարպետ Տ. Գյոզալյանը, որը 10 հնարավորից վաստակեց 7,5 միավոր: Նա ուղեգիր ստացավ մասնակցելու Խ. Միության արագ ճատրակի առաջնությանը, որը տեղի կունենա Լվովում ապրիլի 22-ից 27-ը: Նման իրավունք ունի նաեւ վարպետության թեկնածու Արսեն Եղիազարյանը, որը օրերս դարձավ արագ ճատրակի Հայաստանի չեմպիոն:

▬ Կապանի շախմատի տան ուշադրության կենտրոնում է գտնվում Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Սիեր Հայրյանը: Նա սկսել է ճատրակ խաղալ 4 տարեկանից: 1987 թվականին Կապանում կայացած «Սպիտակ նավակ» առաջնությունում գրավել է առաջին տեղը: 1988 թվականին Կերչում մասնակցել է պատանիների առաջնությանը եւ գրավելով առաջին տեղը, լրացրել առաջին կարգ: 1990 թվականին Տալլինում տեղի ունեցավ միջազգային մրցույթ, որին մասնակցում էին Լեհաստանի, Ֆինլանդիայի եւ Գերմանիայի ներկայացուցիչները: Այդ մրցույթում եւս Սիերը գրավեց առաջին տեղը:

սեփ. թղթակիցներ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎԵԼ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՔԻ ՔՐԴԵՐԻ ՕԳՏԻՆ

Հայաստանի Կարմիր խաչի նախաձեռնությամբ Հայաստանի հանրապետության առեւտրի բանկում բացվել է հատուկ հաշիվ՝ 700302, որը կոչվում է «Հայաստանը՝ Իրաքյան Քրդստանին»: Առաջարկվում է այդ հաշվին միջոցներ փոխանցել Իրաքի քրդերի օգտին, որոնք հալածանքի են ենթարկվում Սադդամ Հուսեյնի ռեժիմի կողմից: Հայաստանի Կարմիր խաչի կենտրոնական վարչությունը, Հայաստանի Գրողների միության քուրդ գրողների բաժանմունքը, ինչպես նաեւ վերջերս ստեղծված հայ-քրդական մշակութային կապերի միությունը կոչով դիմեցին հանրապետության բնակչությանը, ձեռնարկություններին, հիմնարկներին եւ հասարակական կազմակերպություններին, որպեսզի նրանք իրենց բողոքն արտահայտեն ընդդեմ հակաքրդական քաղաքականության, որը վարում է Սադդամ Հուսեյնի ռեժիմը, եւ նյութական աջակցություն ցույց տան Իրաքում գտնվող քուրդ ժողովրդին: □

Արցախյան պատկերներ

Զինվորականները մոլեգնում են

Հայտնի բան է, որ Արցախի հայ բնակչությունը պաշարման մեջ է: Բայց խորհրդային զորքն էլ է իրեն երբեմն պաշարված ու դատապարտված զգում: Դա են ասում թե՛ զինվորների լացող ծնողները, որոնց հանդիպում ենք Մոսկվայում եւ այլուր, թե՛ ըմբոստացող ու ծեծվող զինվորները, որոնք հաճախ բացահայտ հրաժարվում են ծառայել Արցախում, ուր կիսաքաղց մնալով՝ հրապուրվում են գիշերային ավազակությամբ ու ՕՄՕՆ-ի հետ գործակցությամբ...

Զինծառայության ու պաշարման արցախյան կերպը կարող է հունից հանել նույնիսկ բարձրաստիճան ու խելամիտ զինվորականներին: *(Այդպիսի փաստեր էլ կան: Օրինակ՝ մեզ հայտնի Իշխուկը, որը 1990 թ. ամառը Արցախի հեռուստակոմիտեի պարետն էր ու գրաքննիչը, Ղարաբաղի գործուղումից Մոսկվա վերադառնալու նախօրյակին ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ՝ քննադատելով հատուկ դրության գործունեությունն Արցախում: Նրա ելույթը տպագրվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1990 թ. սեպտեմբերի 9-12-ը ընկած համարներից մեկում: Ի դեպ, Իշխուկին կենտրոնական իշխանություններն սկսել են հալածել, եւ նրա դեմ քրեական գործ հարուցելու փորձեր են անում)*: Բայց որպեսզի դա չլինի, նրանց օժտում են ամեն տեսակ արտոնություններով: Եվ ամեն մի տարածքի պարետ նոր օրենքներ ու ձեւեր է հորինում, որ ցույց տա իր դիկտատուրան...

Մարզկոմի շենքի եւ հյուրանոցի տարածքում գիշեր ու զոր անքուն զորքը հրսկում է ապօրինի կազմկոմիտեին, մարզի զինվորական պարետին, Լենինի արձանն ու ադրբեջանական եւ խորհրդային «երկիշխանության» դրոշները՝ շուրջը տարածելով մարդկային աղի քանձր գարշահոտություն: Զորքն ու հրետանին կուտակվել են զինվորական դիկտատուրայի «աքռանիստի» շուրջ, եւ բողարկող կանաչ ցանցավարագույրներով պատված շենքի մոտակայքի մայթերի լայնքով օրական թելեր են կապտվում կամ քարեր շարվում, զորքը մշտապես նման «լուրջ» զբաղվածության մեջ է: Հյուրանոցում ապրող բարձրաստիճան սպաները երեկոներն ընդհանրապես հարբում են՝ իրենց մահճակալների տակից դուրս քաշելով օղու պոլիէթիլենային տարաները: Հարբում են ու մեկ-մեկ էլ ատրճանակներից կրակում՝ խուճապի մատնելով հյուրանոցային թշվառության մեջ երեք տարուց ի վեր բնակվող գաղթական հայ ընտանիքներին:

Որպես կանոն, հարբած են նաեւ գիշերային պարեկները: Բայց որտեղի՞ց է խմիչքը. չէ՞ որ խանութներում ոգելից խմիչք չկա:

Ընտիր գինիներով հայտնի Արցախը գինու գործարանների արտադրանքը չի տեսնում, նախկին պարետը տարիներս է՝ արգելել է ոգելից խմիչքների վաճառքը մարզում (ինչպիսի «հոգատարություն»)՝ դրժվարացնելով դրանց առաքումը նաեւ դեպի դուրս, հատկապես բացառելով Հայաստանի շրջանները: Բոլոր բնագավառներում ձգտում են խզել կապերը Հայաստանի հանրապետության հետ՝ դիմելով բռնության, կեղծիքի ու ապօրինությունների: Զինվորական իշխանության հովանավորությամբ ազերի միլիցիոներները քանդում ու փչացնում են փոստային ծանրոցները, բռնագրավում նամակները, թալանում վագոնները, օդակայանում, ճանապարհներին, գյուղերում անաբեկչությամբ խլում դրամը, կազմակերպում գողություն ու սպանություններ, ոչխարների հոտերով փչացնում են ցանքսերը եւ կրակ բացում դաշտը մշակողների վրա: Նույնիսկ ժողովրդին պառակտելու փորձեր են անում՝ տարածելով, թե իբր երեք հայից մեկը իրենց լրտեսն է:

Պաշարված ժողովրդի վրա դրանք խիստ բացասաբար են անդրադառնում: Նույն մրտայնությամբ է գործում «ժամանակ» ծրագիրն ու Բաքվի հեռուստատեսությունը, որն ստիպված դիտում է արցախահայ բընակչությունը եւ զայրանում ու ընկճվում՝ զրկված լինելով հայկական հեռուստատեսության կողմնորոշող եւ ոգեւորող ծրագրից: Եվ, որպես արդյունք, տուժում է քաղաքական հասունացումը: Բնակչության որոշակի մի խավ սկսում է երազել «հին» օրերի մասին: Սկսում են կառչել Գորբաչովի ողորմածությունից՝ միաժամանակ նզովելով ու հերքելով նրան: Դրությունը վատթարանում է առաջնորդ չունենալու պատճառով: Կոմունիստներից ու պատգամավորներից հիմնականում հիասթափվել են, բայց նրանց նորերով փոխարինելու ձգտում կարծես թե չկա: Մաղձոտ հայացքն անենթով ուղղված է դեպի Մոսկվա ու Բաքու: Այդ վիճակից, ի դեպ, հմտորեն օգտվում են Արցախի շատ կոմունիստ ղեկավարներ՝ կոծկելով իրենց աշխատանքային խարդախությունները, անպտուղ ու արգելակող գործունեությունը (օրինակները շատ են):

Չի կարելի կարծել, թե արժանավորներ չկան: Բայց հատուկ դրության իշխանությունները աչալուրջ փնտրում են նրանց՝ վնասազերծելու համար: Ինչպես առաջ, այժմ էլ ժողովուրդը իրատես առաջնորդ է ճանաչում Հենրիխ Պողոսյանին, որի վերադարձը Մոսկվայից եւ ազատ գործունեությունը անհավատալի է թվում: Եվ փորձում է հուսալ, թե նոր պարետը սաֆոնովշչինայի եւ Պոլյանիչկոյի քաղաքականության արատավոր գործելակերպը չի շարունակի:

Մնում է աստծուց խնդրել միասնություն եւ տոկալու կամք: Եվ Արցախը մեկ ամիս է՝ աղոթում է օրվա 24 ժամերին: Աղոթքի են կանգնում ամբողջ դասարաններ՝ ուսուցիչների հետ միասին: Աղոթում են Արցախում այսօր շատերը եւ պատրաստ են ընդունել «մահ իմացեալը» ազատարար պայքարի մեջ հաղթելու եւ անմահանալու վստահությամբ...

Սեփ. թղթակից

digitised by A.R.A.R.@

ԼԻՈՆ

«ՀԱՅ ԳԻՐՔԸ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ»

Մարտի 16-ին Լիոնի մոտ գտնվող Շամպանյեր-ան-Մոն դ'Օր ավանում, հանգուցյալ բարերար Նապոլեոն Պյուլչոբյանի ապարանքում բացվեց հայ գրքի ցուցահանդես՝ *«Հայ գիրքը դարերու ընթացքին»* խորագրով, որտեղ ներկայացվել էին տպագիր ու ձեռագիր մատյաններ եւ մանրանկարչական նմուշներ:

Պյուլչոբյան հիմնարկի հովանավորությամբ կայացած ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքների մեծ մասն իր վրա էր վերցրել Լիոնի Կաթոլիկ համալսարանի դասախոս Գրիգոր Պլըտյանը, գործակցությամբ ՀԲՀ Միության Փարիզի Նուպարյան մատենադարանի տնօրեն Հարություն Գետրգյանի:

Ֆրանսահայ տարբեր միությունների ներկայացուցիչների, հայ եւ ֆրանսիացի մշակութասեր հասարակայնության ներկայությամբ բացված ցուցահանդեսի ընթացքում տեղի ունեցան չորս դասախոսություններ. *Պյուլչոբյան* հիմնարկի տնօրեն Մարիոն ներկայացրեց հավաքույթի ղեկավար Գ. Պլըտյանին, որն իր հերթին խոսեց հայ մշակույթի մեջ գրքի գրված առանձնաշնորհյալ տեղի մասին. պրոֆ. Ժան-Պիեր Մահեն ներկայացրեց միջնադարի հայ գրականության մի քանի առանձնահատկությունները. Պատրիկ Տոնապետյանը մատուցեց հայ տպագրության ստեղծման պատմությունը, իսկ Մարկ Նշանյանը՝ հայկական տպագրության զարգացման 17-19-րդ դարերի շրջանը:

Ինչպես ասվեց, ներկաների մեջ կային նաեւ ֆրանսիացիներ, որոնցից մեկը՝ Հայաստանի աղետի գոտում աշխատած մի երիտասարդ ֆրանսուհի, հավաստիացրեց, թե այնքան խանդավառված է հայ մշակույթով, որ իր ծննդավայրում՝ Նորմանդիայում, որտեղ հայեր գրեթե չկան, պատրաստվում է կազմակերպել մի ցուցահանդես:

Թղթակից

«ԻՐԱՎԱՋՐԿՎԱԾՆԵՐԸ»

Անգլիական «Սենչրի» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել անգլիացի վիպագիր *Դուգլաս Սքոթի «Իրավազրկվածները»* գիրքը: Ապրիլյան եղեռնից ազատված մի մանկան ողիսականն է այս գրքի նյութը, որտեղ ցոլանում են հեղինակի արդարացի եւ մարդկային մոտեցումը հայ ժողովրդի ցեղասպանության արհավիրքի նկատմամբ:

Լալկան վիպասանություն չէ հրատարակվածը, այլ պատմությունն է իրենց ազգային գոյությունն ու պատիվը ամեն գնով պաշտպանելու ելած ու զենքի դիմած մի խումբ հայերի դյուցազնության:

Վեպի նյութն առնված է իրական կյանքից եւ առանց արցունքների անհնար է կարդալ այն. արցունքներին հաջորդում է հպարտության զգացումը, երբ տեսնում ես, թե ինչպես մի օտար հաջողել է *«մուտք գործել հայի մտքու մեջ»* եւ հարազատորեն զգալ մեր կրածների ահավորությունը:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

— *ՄՈՆՐԵԱԼ* - Այստեղի Մաքգիլ համալսարանի Հայ Ուսանողական միության կազմակերպությամբ, Ջեկու եկեղեցու համերգասրահում մարտի 22-ին տեղի է ունեցել աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի համերգը, հայ եւ օտար 400 երաժշտասերների ներկայությամբ:

— *ԲՈՍՏՈՆ* - Ս. Երրորդություն եկեղեցու համալիրի «Չարլզ եւ Նվարդ Թալանյան» սրահում մարտի 17-ին տեղի է ունեցել Ռամկավար ազատական կուսակցության Ամերիկայի արեւելյան շրջանի կույգ պաշտոնաթերթերի՝ «Պայքար» եւ «The Armenian Mirror-Spectator» շաբաթաթերթերին նվիրված ճաշ-երեկո: Կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ դոկտ. Գեւորգ Քեշիշյանի բացման խոսքից հետո բանախոսել են Բենտլի քոլեջի նախագահ դոկտոր Գրեգորի Ադամյանը եւ Մոնրեալի Արմեն-Քեբեկ Ալեք Մանուկյան վարժարանի տնօրենուհի Վարդուհի Պալյանը: Գործադրվել է գեղարվեստական ծրագիր: Հանդիսավարել է Բարբրա Թելալյանը:

— *ՀՈԼԻՎՈՒԴ* - Մարտի 5-ին «Կարապետյան» սրահում դասախոսությամբ հանդես է եկել ռուս գրող Ինեսա Բոդկովան, որը շուրջ երկու տարի զբաղվում է դարաբաղյան հարցով, գրել է բազմաթիվ հոդվածներ: Հ. Հ. Դաշնակցության Հայ Դատի «Գարեգին Նժդեհ» կոմիտեի կազմակերպությամբ տեղի ունեցած այդ հանդիպման ընթացքում ռուս գրողը թարգմանչի օգնությամբ ներկաներին պատմել է Արցախում խորհրդային զինվորների կողմից կատարվող պատկերները, դատապարտել կենտրոնական իշխանությունների, մամուլի եւ հեռուստատեսության վերաբերմունքը այս հարցի նկատմամբ: Վերջում նա պատասխանել է ներկաների հարցերին:

— *ՍՈՖԻԱ* - Ս. Աստվածածին եկեղեցում մարտի 16-ին տեղի է ունեցել Հայ առաքելական եկեղեցու բուլղարահայ թեմի 5-րդ պատգամավորական ժողովը՝ 18 տարի տեւած դադարից հետո: Ժողովին ներկա են գտնվել 23 պատգամավորներ՝ 26 ընտրվածներից, ինչպես նաեւ հյուրեր. «Երեւան» կազմակերպության նախագահ Սարգիս Սարգիսյանը, հայ ավետարանական համայնքի, Սոֆիայի, Պլովդիվի եւ Վառնայի հոգեւոր հովիվները. թեմական խորհրդի անդամներ եւ ուրիշներ: Ժողովին պաշտոնական մասնակցություն են ունեցել Մայր աթոռ Ս. Էջմիածնից ժամանած հոգեւոր երկու ներկայացուցիչներ:

Գաղտնի քվեարկությամբ Տիրայր արք. Մարտիկյանը վերընտրվել է Բուլղարահայ թեմի առաջնորդ: Կազմվել է նաեւ Կրոնական խորհուրդ՝ բաղկացած Առաջնորդ սրբազանից, Սոֆիայի, Պլովդիվի եւ Վառնայի քահանաներից:

— *ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ* - Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցու «Աղաջանյան» սրահում մարտի 16-ին տեղի է ունեցել Թեքեյան մշակութային միության «Արշակ Տիգրանյան» վարժարանի 10-ամյակին նվիրված տոնակատարություն: Տնօրեն Վարդգես Գարայանի հանդիսավարած երեկոյի ընթացքում հանգանակվել է մոտավորապես քառորդ միլիոն դոլլար՝ գլխավորապես Ա. Տիգրանյանի եւ Ա. Մանուկյանի նվիրատվություններից, ի նպաստ դպրոցի ֆոնդին:

— *ՓԱՐԻԶ* - Ապրիլի 7-ին, Սեն Ժյուլիեն լը-Պովր եկեղեցում, հայ եւ օտար երաժշտասերների առաջ մենահամերգով հանդես է եկել փարիզահայ երգչուհի Աստղիկ Տերեյանը, նվագակցությամբ կլավեսինի:

Հանդես գալով լուրջ եւ խնամված ծրագրով՝ երգչուհին ներկայացրել է Բրյուսելի, Պագանինիի, Կոմիտասի եւ Աշոտ Սաթյանի երգերը, մատուցելով նաեւ մի գեղեցիկ փունջ միջնադարյան հայ երաժշտության նմուշներից:

Երգչուհին պատրաստվում է այն կրկնել առաջիկա մայիսին:

— *ՎԱՇԻՆԳՏՈՆ* - Մարտի 15-ին ԱՄՆ-ի մայրաքաղաքի Կարմիր խաչի կենտրոնում կատարվել է մոսկվաբնակ հայ քանդակագործ Ֆրիդրիխ Սողոյանի «Մայր եւ կավակ» արձանի բացումը: Այն նվիրված է ամերիկյան ժողովրդին՝ իբրեւ երախտագիտություն Հայաստանի երկրաշարժի առիթով նրա դրսեւորած գթասրտության:

Ամերիկայի Հայկական Համագումարի տնօրեն Ռոս Վարդյանի բացման խոսքից հետո ելույթ են ունեցել Վաշինգտոնում խորհրդային դեսպանության մշակույթի գծով խորհրդական Ալեքսանդր Պոտեմկինը, ամերիկյան Կարմիր խաչի տնօրենուհի Էլիզաբեթ Դոուլը, արձանի հեղինակը:

Նույն երեկոյան խորհրդային դեսպանատանը տեղի է ունեցել ընդունելություն, որի ընթացքում առանձին խոսքով հանդես են եկել փոխդեսպան Ս. Չետվերեկովը եւ 3-րդ քարտուղար Գ. Նանագյուլյանը:

ՄԱՐՋՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄՆ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՐԵՔ ԲՈՅԺՔՈՅՐԵՐ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

ՌԱԿ Անգլիայի պաշտոնաթերթը «ԷՐԵԲՈՒՆԻ»-ն հաղորդում է.

Գեղագիտական վիրաբուժութեան մարզին մէջ մարզուելու նպատակով Հայաստանէն Ամերիկա մեկնած երեք բոյժքոյրեր մերժեցին Հայաստան վերադառնալ: Անոնք մաս կը կազմէին 15 հոգիէ բաղկացած բժիշկներու խումբի մը, որոնք անցեալ սեպտեմբերին Միացեալ Նահանգներ մեկնած էին մարզուելու համար «Եէյլ Նիւ Հէվըն» հիւանդանոցին գեղագիտական վիրաբուժութեան բաժնին մէջ, եւ վերադառնալով պիտի աշխատէին Հայաստանի մէջ: Հայկական Բարեգործական ընդհանուր միութեան բժշկական Վերականգնումի ծրագրի տնօրէն Ըէջինա Օհանեան յայտնեց, թէ ամերիկեան հիւանդանոցի մասնագէտները երեք բոյժքոյրերու աշխատանքը բաւարար չէին նկատած եւ յայտնած էին, որ անոնք կարող չեն մասնագիտական այդպիսի պատրաստութեան մը հետեւելու: Ուստի, հիւանդանոցի վարչութիւնը ազատ արձակած էր զանոնք, որպէսզի ետ Հայաստան վերադառնան:

Հ.Բ.Ը.Միութիւնը անոնց վերադարձի բոլոր պատրաստութիւնները տեսած էր, նոյնիսկ Հայաստանի առողջապահական նախարարութեան դիմելով ապահոված էր անոնց աշխատանքը իրենց նախկին պաշտօններուն վրայ: Բայց, իրենց մեկնումի գիշերը, երեք բոյժքոյրերը անյայտացան, իրենց բնակարանին մէջ ձգելով նամակ մը, որով կը յայտարարէին, թէ կը մերժեն Հայաստան վերադառնալ:

Երեք բոյժքոյրերը անյայտացան հակառակ անոր, որ իրենց խորհրդային անձնագիրները եւ անհրաժեշտ փաստաթուղթերը ի պահ դրուած էին Հ.Բ.Ը.Միութեան մոտ:

Ամերիկա մարզուելու մեկնած հայաստանցի բժիշկներուն ու բոյժքոյրերուն ընտրութիւնը կը կատարուի Եէյլ հիւանդանոցի մասնագէտներուն կողմէ, Երեւանի մէջ:

Անցեալ տարի ալ այս կերպով Ամերիկա մեկնած բժիշկներէն երկուքը յետագային մերժած էին Հայաստան վերադառնալ:

Այս անձերը Ամերիկայի մէջ կը մարզուին գեղագիտական վիրաբուժութեան կեդրոնի մը համար, որ Հայկական Բարեգործական ընդհանուր միութեան կողմէ այս տարեվերջին պիտի կառուցուի Երեւանի մէջ, եւ որուն համար ընդհանուր ծախս նախատեսուած է 4 միլիոն դոլար:

16 Մարտ 1991

ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ

ԽՄԲԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մարտի 28-ին Բոստոնի Մասնթ Օպրան հիվանդանոցում իր մահկանացուն է կնքել սփյուռքահայ վաստակավոր երաժիշտ եւ խմբավար Ռուբեն Գրիգորյանը, 76 տարեկան հասակում:

Հանգուցյալը ծնվել էր 1915թ.-ին, Թիֆլիսում: Պատանի տարիքում ջութակի դասընթացների հետեւելուց հետո փոխադրվել է Թավրիզ, որտեղից հետագայում անցնելով Թեհրան՝ սովորել է պետական երաժշտանոցում: Ապա տեղափոխվել է Փարիզ, որտեղ ավարտել է Ecole de Musique: Վերադառնալով Թեհրան՝ որոշ ժամանակ վարում է տեղի երաժշտանոցի ջութակի ամբիոնի վարիչի պաշտոնը, միաժամանակ համերգներ տալիս Թեհրանում, Թավրիզում եւ Ադրբեջանում:

1951թ.-ին Ռ. Գրիգորյանը հաստատվում է Մ. Նահանգներում: Հաջորդ տարի վարում է Բոստոնի համբավավոր Pops նվագախումբը, որի խմբավարն է մնում երկար տարիներ, միաժամանակ ստեղծելով տեղի «Կոմիտաս» երգչախումբը:

60 տարի շարունակ ծառայելով երաժշտության՝ Ռ. Գրիգորյանը արժանանում է հայ եւ օտար երաժշտական շրջանակների գնահատանքը: Հաքանշաններով մեծարվում է Ամենայն Հայոց Հայրապետի եւ Տանն Կիլիկիո կաթողիկոսի կողմից:

Հորինել է «Ծատրակումի հույսը» սիմֆոնիան, «Երանյան սյուիտներ» շարքը, հայկական եւ պարսիկ ժողովրդական երգեր, այլ ստեղծագործություններ, որոնց շարքում առանձին տեղ է գրավում «Պատարագը», որը պիտի տպագրվեր առաջիկա սեպտեմբերին, հեղինակի ստեղծագործական կյանքի 60-ամյա հոբելյանի օրերին, որն, ափսոս, այլեւս չի կայանալու:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

Գաղտնի քվեարկությամբ Տիրայր արք. Մարտիկյանը վերընտրվել է Բուլղարահայ թեմի առաջնորդ: Կազմվել է նաեւ Կրոնական խորհուրդ՝ բաղկացած Առաջնորդ սրբազանից, Սոֆիայի, Պլովդիվի եւ Վառնայի քահանաներից:

— *ՀՈՒՍ ԱՆՋԵԼԵՍ* - Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցու «Աղաջանյան» սրահում մարտի 16-ին տեղի է ունեցել Թեքեյան մշակութային միության «Արշակ Տիգրանյան» վարժարանի 10-ամյակին նվիրված տոնակատարություն: Տնօրեն Վարդգես Գարայանի հանդիսավարած երեկոյի ընթացքում հանգանակվել է մոտավորապես քառորդ միլիոն դոլլար՝ գլխավորապես Ա. Տիգրանյանի եւ Ա. Մանուկյանի նվիրատվություններից, ի նպաստ դպրոցի ֆոնդին:

— *ՓԱՐԻԶ* - Ապրիլի 7-ին, Սեն Ժյուլիեն լը-Պովր եկեղեցում, հայ եւ օտար երաժշտասերների առաջ մենահամերգով հանդես է եկել փարիզահայ երգչուհի Աստղիկ Տերեյանը, նվագակցությամբ կլավեսինի:

Հանդես գալով լուրջ եւ խնամված ծրագրով՝ երգչուհին ներկայացրել է Բրյուսելի, Պագանինիի, Կոմիտասի եւ Աշոտ Սաթյանի երգերը, մատուցելով նաեւ մի գեղեցիկ փունջ միջնադարյան հայ երաժշտության նմուշներից:

Երգչուհին պատրաստվում է այն կրկնել առաջիկա մայիսին:

— *ՎԱՇԻՆԳՏՈՆ* - Մարտի 15-ին ԱՄՆ-ի մայրաքաղաքի Կարմիր խաչի կենտրոնում կատարվել է մոսկվաբնակ հայ քանդակագործ Ֆրիդրիխ Սողոյանի «Մայր եւ կավակ» արձանի բացումը: Այն նվիրված է ամերիկյան ժողովրդին՝ իբրեւ երախտագիտություն Հայաստանի երկրաշարժի առիթով նրա դրսեւորած գթասրտության:

Ամերիկայի Հայկական Համագումարի տնօրեն Ռոս Վարդյանի բացման խոսքից հետո ելույթ են ունեցել Վաշինգտոնում խորհրդային դեսպանության մշակույթի գծով խորհրդական Ալեքսանդր Պոտեմկինը, ամերիկյան Կարմիր խաչի տնօրենուհի Էլիզաբեթ Դոուլը, արձանի հեղինակը:

Նույն երեկոյան խորհրդային դեսպանատանը տեղի է ունեցել ընդունելություն, որի ընթացքում առանձին խոսքով հանդես են եկել փոխդեսպան Ս. Չետվերեկովը եւ 3-րդ քարտուղար Գ. Նանագյուլյանը:

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՈՒՄ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նորընտիր նախագահ Հրաչիկ ՍԻՄՈՆՅԱՆԸ մարտի վերջերին նամակով դիմել է սփյուռքի բոլոր միություններին, շրջանակներին եւ խմբագրություններին, ուր մասնավորապես ասվում է.

Սույն նամակով դիմելով ձեզ, խնդրում ենք հնարավորին կարճ ժամկետում տալ ձեր առաջարկությունները Կոմիտեի գործունեության վերակառուցման վերաբերյալ:

Հայաստանում ծավալված ժողովրդավարական գործընթացները մեծապես հեշտացրել են հայրենաբնակ հայության եւ գաղութների հայերի շփումներն ու փոխայցելությունները:

Ստեղծված նոր իրադրությունը սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին հնարավորություն է ընձեռել էլ ավելի կարգացնելու եւ ամրապնդելու կապերը հայ գաղթօջախների մշակութային, կրթական, երիտասարդական, կանանց, եկեղեցական միությունների ու կազմակերպությունների, ազգային կուսակցությունների հետ:

Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնման խիստ դրական գործընթացը երեւան է բերել նաեւ որոշ բացասական, անցանկալի երեւույթներ: Տվյալ դեպքում խոսքը մշակութային, տնտեսական եւ այլ կապերի բնագավառում տեղ գտած թերությունների մասին է: Անցանկալի երեւույթները դժվարացնում են սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքները: Հայաստանից երբեմն Սփյուռքում հայտնվում են համերգային խմբեր, անհատ կատարողներ, մտավորականներ, որոնք ի վիճակի չեն լինում ներկայացնելու մեր արվեստի եւ գիտության իսկական մակարդակը. Հայաստանում ընթացող վերափոխումների ճշմարիտ պատկերը, իսկ երբեմն էլ իրենց գործելակերպով եւ բարոյական պահվածքով սփյուռքում առաջ են բերում արդարացի դժգոհություններ, որ մեկ խոր մտահոգություն է պատճառում:

Պատահում են նաեւ դեպքեր, երբ կանական գաղթօջախներում տեղի են ունենում Հայաստանից եկած խմբերի խաշաձեւումներ եւ խճողումներ:

Նշված թերությունների պատճառներից մեկն այն է, որ սփյուռքի առանձին կազմակերպություններ եւ անհատներ ձգտում են հայրենիքից խմբեր եւ կատարողներ հրավիրելը մենաշնորհ դարձնել եւ նախապես իրենք են որոշում, թե ում եւ ինչ խմբեր հրավիրել, անտեսելով Կոմիտեի կարծիքը: Դրա անմիջական հետեւանքն այն է, որ Հայաստանի մտավորականների եւ արվեստի գործիչների մի խումբ ըստ էության մոնոպոլ վիճակ է ստեղծել իր համար, իսկ բարձր արժանիքներ ունեցող ուրիշ մտավորականներ ու գործիչներ այնպես էլ շարունակում են անծանոթ մնալ սփյուռքահայությանը:

Կցանկանայինք հաստատել նաեւ, որ հայրենիքից համերգային խմբերի եւ անհատ կատարողների առանձին գաղութներ շափից ավելի հաճախակի այցելությունները երբեմն խանգարում են տեղի մշակութային ձեռնարկներին: Ելնելով վերոհիշյալից, գտնում ենք նպատակահարմար.

1. Հայրենիքից գաղութներ ներկայացուցիչներ հրավիրելիս գործ ունենալ միայն Կոմիտեի հետ, ճանաչել մեր կողմից ուղարկված պաշտոնական ներկայացուցիչներին:

2. Սփյուռք մեկնող ցածրորակ կատարողների անցանկալի հոսքը կանխելու նպատակով գաղութներում ընդունել միայն այն խմբերին ու անհատ արվեստագետներին, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության մշակութի նախարարության հատուկ հանձնախմբի երաշխավորությունը:

3. Փոխայցելությունները արդյունավետ կազմակերպելու, Հայաստան ուղարկվելիք հրավերը որեւէ կազմակերպության կամ անձի մենաշնորհը չդարձնելու, գաղութներում կազմակերպվող ձեռնարկումները ըստ սփյուռքահայության միասնականությանը նպաստելու համար ստեղծել համադրիչ միասնական ներկայացուցչական մարմիններ, որոնցում ներկայացված կլինեն մշակութային բոլոր միությունները եւ կազմակերպությունները, անկախ գաղափարական դավանանքից եւ քաղաքական գործելակերպից:

digitised by A.R.A.R.@

թղթածրար

4 Հայ-թուրքական հարաբերություններ

Բանալով հայ-թուրք հարաբերությունների մասին թղթածրարը, մեր թերթի փետրվարի 20-ի համարի առաջաբանում նշել էինք, թե այդ հարաբերությունների բովանդակության ու ձեւի շուրջ բանավեճերը նոր չեն. դեռեւս 20-30-ական թթ. այդ մասին եղել են տարբեր կարծիքներ, մամուլում հրապարակվել են տարամերժ կեցվածքներ, թեեւ քանակով քիչ են եղել այն ելույթները, որտեղ պաշտպանվել է հայ-թուրք նորմալ հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Եւ իբրեւ կանոն՝ այդպիսի ելույթները շուտով լռեցվել են՝ ընդհանուր ժխորի մեջ:

Այդպիսի ելույթների թվին է պատկանում Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր ղեկավարներից՝ մեծ բանաստեղծ ու հրապարակագիր Վահան Թեքեյանի 1931-ի մարտի 6-18 ՌԱԿ-ի Եգիպտոսի պաշտոնաթերթ «Արեւ» օրաթերթում հրատարակած խմբագրականների շարքը, որը նույն թվականին լույս է տեսել նաեւ առանձին գրքույկով:

Վերահրատարակելով այն մեր թերթի այս եւ առաջիկա համարներում (նյութի կարեւորությունը ստիպում է մեզ շեղում կատարել շարունակելի հոդվածներ չտպագրելու մեր սկզբունքից), մեր նպատակն է ցույց տալ այն սթափ եւ իսկական ազգային քաղաքագետի մտածողությունը, որը եղել է Վ. Թեքեյանինը այս՝ իսկապես զգայուն հարցում, դեռեւս այն թվերին, երբ շատ ավելի բարմ էր հայության Մեծ տառապանքը: Ու թեեւ կարելի չէ համաձայնվել հեղինակի բոլոր տեսակետներին, հատկապես ինչ վերաբերում է ինքնապաշտպանության հարցում նրա տված գնահատականին, սակայն հիացում է պատճառում հայ-թուրք հարաբերությունները առողջ եւ բարդույթներից հեռու մակարդակի վրա տեսնելու նրա ձգտումը:

Ավելացնենք նաեւ, որ հոդվածը (որի մեջ հեղինակը մի տեղ նշում է, թե այնտեղ արտահայտված տեսակետների համար պատասխանատու է անձամբ ինքը, առանց իր խոսքերով ասած՝ անգաժեշ անելու իր կուսակցությունը) ծավալային մտահոգություններով լույս է տեսնում որոշ կրճատումներով, եւ ցանկացողներին կարող ենք տրամադրել ամբողջությունը նրա:

ԽՄԲ.

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

ԹՈՒՐՔԵՒՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թուրք-հայ յարաբերութիւններուն վերլուծման ժամանակը հասած կը համարէի կատարելու եւ կատարել կը փափաքէի ոչ թէ յօդուածներով, այլ գիրքով մը: Այդ գիրքը պէտք է պարունակէր, ըստ իս, պատմութիւնը մեր երկու ցեղերու կենակցութեան՝ մասնաւորապէս քննութեամբ ԺԹ. դարու ընթացքին պատահած դէպքերուն, վեր առնէր անոնց իւրաքանչիւրին յստակ ընդունակութիւններն ու թերութիւնները, ճանչցնէր անոնց հոգեբանութիւնը, անջատէր եւ զետեղէր տնտեսական գործօնը ընդդէմ քաղաքական գործօնին, որոշէր օտար ազդեցութիւններուն դերը Թուրքիոյ հանդէպ հայ մտքին խտորման ու հայ բազուկին շարժման մէջ եւ հայոց հանդէպ թուրք պետական մտքին այլափոխման մէջ, բարենորոգմանց պահանջէն մինչեւ անկախութեան պահանջ (Մեծ պատերազմէն ետք) հայոց պահանջումներուն արդարութիւնը հաստատելով հանդերձ՝ մատնանշէր զանոնք ձեռք բերելու համար մեր գործած սխալները, շեշտէր թուրք պետական մարդոց ամբողջական պատասխանատուութիւնը հայոց տարագրութեան եւ բնաջնջման ոճիրին մէջ՝ ընդդէմ թուրք ժողովրդին յարաբերական անպատասխանատուութեան, նկատի առնէր հայ ներկայ պետութեան իրականութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիոյ ներկայ քաղաքական եւ տնտեսական իրականութիւնը, եւ այդ երկու իրականութեանց մէջտեղ, անո՛նց լոյսով տեսնէր հայ ամբողջ ժողովուրդին ապրելու, աճելու եւ զարգանալու հարցին լուծումը, ու վերջապէս, ի պատրաստութիւն այդ լուծումին, ջանար խօսքը հասկցնել թէ՛ մեզի եւ թէ՛ թուրքերուն, քանի որ երկուստեք **շահ ունէինք** մեր յարաբերութիւնները կանոնաւորելու մէջ...:

Կ'ուզէի, այո՛, կ'ուզէի հայութիւնը ազատել մղձաւանջէ մը, որ հետզհետէ ստեղծուեր, սաստկացեր ու ծանրացեր է իր վրայ, իրմէ շատ զօրաւոր թշնամի մը դիմաց առանձին գտնուելու, անոր դէմ կռուիլ ստիպուած ըլլալու, իր ամբողջ ճիգը այդ նպատակին համար լարելու եւ միշտ ճախողելու, **ճախողիլ գիտնալու** մղձաւանջը: Այն կէս-քունի եւ կէս-արթնութեան վիճակը, որ մերն է տասնեակ տարիներէ ի վեր, կը զգայի եւ կը զգամ, որ պէտք է դադրի վերջապէս ու ան կրնայ դադրիլ գերագոյն ճիգով մը, որ կը կայանայ ինքզինք,- այսինքն մեզ,- հոգեպէս ազատելու մէջ թշնամին ազդեցութիւնէն, ինքզինք համոզելով, թէ արտաքին ձեւերէն, դէպքերէն ու շարժումներէն անկախ՝ ինքը զօրաւոր է իր մէջ, ինքը կարող է տէր մնալու իր մտքին: Կարող է իրեն համար անվնաս դարձնել այդ թշնամին, մօտենալ, դպիլ անոր, զայն նոյնիսկ բարեկամ ընել իրեն՝ եթէ պէտք է. ամէն պարագայի այլեւս չվախնալ անկէ, չհիրնասանալ անով, ազատ ըլլալ չմտածելու անոր եւ մտածելու շատ ուրիշ բաներու, որոնք իր մէջ են եւ իրմէ դուրս եւ կը սպասեն յայտնուիլ ու միանալ իրարու:

Ինծի կը թուէր անշուշտ, որ հայերը,- այսօրուան Հայաստանէն դուրս ապրող հայերը մանաւանդ,- մոռցած էին իրենց մարդ ըլլալը ու կ'ապրէին միմիայն իբրեւ հայ, իսկ իբրեւ հայ ապրելու համար՝ պէտք ունէին անընդհատ թուրքը յիշելու, անկէ իրենց կրած հարուածները, իրենց ունեցած վէճը եւ իրենց պահանջները յիշելու շարունակ: Եւ այդ յիշատակներով անոնք միշտ կ'ուտէին ինքզինքին՝ ինչպէս կ'ըսուի շատ ճիշդ կերպով, այսինքն կը ապառէին ու կը տկարանային: Եւ այն խորին ու անյայտ համոզումը ունէի, թէ հայերը, այսուհետեւ իբրեւ հայ ապրելու համար, պէտք է դադրէին անցեալի ու ներկայի կապակցութենէն եւ պէտք է զայն զգային վերէն՝ որ մարդկութեան հետ իրենց ունեցած կապն է, մարդկութիւն բառին մէջ ըմբռնելով անոր ամէնէն ընդհանուր անազգային կերպով մարմին, միտք եւ հոգի կազմող տարրերը:

Հայերս դադրած իբրեւ մարդ ապրելէ, մտածելէ եւ զգալէ, փրկութիւնը մարդու այդ ազատութիւնը գտնելն էր ամէն բանէ առաջ եւ ասոր համար անհրաժեշտ էր փրկուիլ նախ թուրքերէն, անոնց յաճախանքէն: Փրկելով, անշուշտ, ինչ որ կարելի էր փրկել, շօշափելի կամ ոչ, փրկելու պատրանքը միայն ունենալ ի հարկին, եւ այս՝ միմիայն աւելի չպակսեցնելու համար մեր հոգեկան ուժը, զայն պահելու համար **մարդկութիւնը** մեր մէջ փրկելու եւ աւելցնելու աւելի մեծ՝ գերագոյն գործին:

...Կարծես ընդունած ենք միանգամ ընդ միշտ՝ թէ հայոց եւ թուրքերու յարաբերութիւնները երբեք չեն փոխուիր ու պիտի չըփոխուին, բացի այն պարագայէն, ուր բուռն դէպքեր պատահին: Ժամանակը, խաղաղութեան շրջանը, մտաւորական եւ հոգեբանական ներգործութիւնները, ներքին եւ արտաքին պատահարները կրնան, աշխարհի ամէն կողմը, ամէն ազգերու յարաբերութիւններուն մէջ նոր վիճակներ ստեղծել. մեզի համար՝ ոչ:

Քաղաքական հասկացողութեան բացարձակ պակա՞ս թէ մտքի ծուլութիւն: Իրողութիւնը այն է, ամէն պարագայի մէջ, որ մենք երբեք վերաքննութեան չենք ենթարկեր մեր գաղափարները ամենակարեւոր, կենսական, ճակատագրական հարցի մը մէջ անգամ, ինչպիսին է թուրքեւհայ յարաբերութիւններու հարցը: Այդ հարցը տասնեակ տարիներ մեզի կ'երեւայ միշտ նոյն ձեւով,- գէշ են յարաբերութիւնները եւ գէշ պիտի մնան. բարւոքումը կախուած է միակ միջոցէ մը. այդ միջոցը գտած կամ ընդօրինակած ենք ժամանակին. ուրիշը չկայ, չի՛ կրնար ըլլալ...:

Ասիկա **անհիշդ**, վնասակար ու պիտի ըսենք՝ մահացու մտայնութիւն մըն է: Ասիկա անքաղաքական, հակաքաղաքական է, եւ վա՛յ այն ժողովուրդներուն, որոնք իրենց ճակատագիրը սրբագրել ու վարել կ'աշխատին այսքան խակ կերպով, այսքան անճկուն մտքով, արտաքոյ քաղաքականութեան վերջապէս՝ աշխարհի մը մէջ, ուր առանց քաղաքական ազդեցութեանց եւ հակազդեցութեանց տերեւ մը իսկ չի շարժիր...:

Աւելի առաջ գացած, յայտարարենք այստեղ՝ թէ հայրենասիրութենէ պիտի չճառենք. դեռ մօտիկ անցեալին մեզի թողած շինծու յիշատակները պիտի պահենք մեր սրտին մէջ, անոնցմէ պիտի ներշնչուինք, բայց զանոնք մէջտեղ պիտի չհանենք. մեր զգացումները պիտի չցուցադրենք. վրէժ պիտի չընենք՝ այն գերազանց նկատումով, որ ան կուրցնող զգացում մըն է, մինչ մենք պէտք ունինք մեր բովանդակ յստակատեսութեան եւ հեռատեսութեան՝ մեր ճամբան քալելու համար՝ հայ ժողովուրդին բարօրութիւնն է եւ ոչ թէ ուրիշ ժողովուրդ մը իր գտնելիք վրէժխնդրական գոհացումը...

... Մենք արիւնի եւ զէնքի քաղաքականութեան կողմնակիցներէն չենք: Զգացման եւ ճաշակի, նոյնիսկ վարդապետութեան խնդիր չէ այս, այլ՝ նորէն՝ ազգային շահու: Ցիսուն, հարիւր միլիոնանոց ժողովուրդները կը զգուշանան նոր արիւն թափելէ եւ իրենց կենսական նկատած խնդիրներուն խաղաղ միջոցով գէշ-աղէկ կարգադրութիւնը կը նախընտրեն պատերազմի արիւնահեղութեան: Մենք, որ մեր թիւին կէսը կորսնցուցինք արդէն, պէտք է ջանանք՝ ամէն բանէ առաջ՝ մեր մէկ կաթիլ արիւնն անգամ խնայելու: Ոչ իսկ խորհինք զայն տալու հաւանականութեան, մեր պատրաստակամութեան. ատով ինքզինքնիս պիտի խաբենք, յիմար խօսքեր պիտի ըսենք ու յիմար ձեռնարկներու մէջ պիտի մխրճուինք եւ յուսախաբութիւնը զոր միշտ պիտի կրենք այդպիսի դիրքերէ եւ ձեռնարկներէ վերջ՝ մեզ այլապէս պիտի կորովազրկէ՝ քան այլեւս արիւն չթափելու մեր որոշումը: Խելքի կորովը միակն է զոր մեր վիճակին մէջ կրնանք ու պարտինք ունենալ՝ ապրելու, տեւելու եւ զարգանալու համար: Մեր անմիջական շահէն զատ, որ այս կը պահանջէ, կայ նաեւ միւս միջոցին նախ բացարձակ ապարդիւնութեան նկատումը, եւ երկրորդ ալ՝ այն պարագան, որ կոիւէ խուսափող, անկէ վախցող, հետզհետէ անոր կռնակ դարձնող աշխարհի մը մէջ՝ մեր ինքնին ճղճիմ փորձերը մեզի ապահովապէս պիտի շահեցնէին կատղած խելագարներու համբաւը...:

Հիմա որ ենթադրենք բաւական մը քրքրեցինք եւ ճանչցուցինք, կ'ուզենք անցնիլ անոր վրայի խաւին եւ ըսել թէ ի՛նչ պէտք է ընել ու ի՛նչ պէտք չէ ընել, որպէսզի թուրքեւհայ յարաբերութեանց արդի վիճակը բարելաւուի, այնպէս որ կարելի ըլլայ այդ հողին վրայ օգտակար բոյսեր մշակել, փոխանակ միշտ թունաւոր տունկերու...: Մենք հասկցուցինք արդէն, թէ քաղաքականութիւնը լաւատեսութիւն կը պահանջէ, որով մեզի մեղադրելու չէ թէ յոյս կը դնենք թուրք ցեղին ու իր վարիչներուն վրայ՝ մեր ուղղութիւնը մտածելու ատեն: Մենք այդ յոյսը ունինք, այո՛, եւ եթէ չունենայինք ալ՝ նորէն պիտի շարժէինք. եւ պէտք է շարժինք ազգովին այնպէս՝ որպէս թէ զայն ունեցած ըլլայինք: Այս է պահանջը մեր ներկայ վիճակին ու նաեւ աշխարհի ներկայ վիճակին...:

Ի՛նչ **եղած են**, ի՛նչ **են** եւ ի՛նչ **կրնան** ըլլալ այս յարաբերութիւնները: Մեր նպատակն է **կրնան ըլլալը** գտնել, բայց ատոր համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ **ենին** եւ **եղած ենին** վրայ: Ատկէ առաջ ալ, սակայն, նորէն պէտք է փակագիծ մը բանանք:

Երբ պատասխանատու պետական գործիչը իր ազգին արտաքին յարաբերութիւններուն վրայ կը խորհի այս կամ այն ուղղութիւնը տալու համար անոնց, **նկատի կ'առնէ** ժողովրդային զգացումը, բայց **չի տարուիր** անով: Պարտաւոր է **նկատի առնել** նոյն իսկ յաջողութեանը համար իր ծրագրին. բայց **տարուիլը** ժխտումն է իր կոչումին, իսկ **փայփայել եւ գրգռել** այդ զգացումը՝ հաճելի ըլլալու համար ժողովուրդին, անոր մօտ իր դիրքը ամրապնդելու, անկէ պատիւ եւ շահ վայելելու համար, գործն է ամենազգէշ եւ ամենավնասակար գործիչին, որ իր պատկանած ժողովուրդին աղէտ մըն է: - Մենք այս կարգի գործիչներ շատ ունեցած ենք եւ ունինք, «անկախ» եւ կուսակցական, եկեղեցական եւ աշխարհական գործիչներ, ամբողջ կուսակցութիւններ՝ որոնք միակ պետական գործիչի մը պէս, վարուած են վերջինին նման, անոր ընթացքով եւ անոր շարժառիթներով: - Այս վայրկեանիս, երբ հոս **հրապարակաւ** կ'ընենք բան մը զոր քաղաքագէտը **գաղտնի** կ'ընէ, մենք մեզի առաջնորդ ունինք ժողովրդային զգացումը նկատի առնել, բայց անկէ չտարուիլ, չենք խօսիր զայն փայփայելու եւ գրգռելու մասին:

Անկեղծութիւնը եւ, եթէ պէտք է քաջութիւնն ալ ունենանք ըսելու, թէ անցեալին մէջ հայերն ու թուրքերը միշտ գէշ չեն եղած իրարու հետ: Մինչեւ 1877 ռուսօթուրք պատերազմը՝ թուրքը ցեղային ատելութիւն չունէր հայուն դէմ. հայը իր **բայան** էր, ճիշդ է, ինչպէս իր միւս **բայաները**, բայց անոնցմէ աւելի մօտ էր եւ վստահութիւն կը ներշնչէր իրեն, ճիշդ է, հայուն քրիստոնէութիւնը զինք թէ՛ արհամարհելի եւ թէ քիչ մը երկիւղալի կ'ընէր յաչս թուրքին, երկիւղալի՝ այն պատճառաւ, որ ի հողերուն վրայ աչք ունեցող քրիստոնեայ տէրութիւնները կրնային հայն ալ օրին մէկը պատրուակ բռնել եւ միջամտել, ինչպէս ըրած էին միւսներուն համար. այսուհանդերձ, հայը անվնաս էր դեռ, եւ թուրքը անոր հանդէպ մասնաւորապէս գէշ կամ խիստ վերաբերում մը չունէր, հարստահարութիւնները (մեծ մասամբ քիւրտերո՛ւ գործ) հայը չունէին իրենց նշանակէտ՝ այլ անոնց աշխատանքին արդիւնքը, կառավարական անարդարութիւնը մասամբ ապիկարութեան հետեւանք էր եւ մասամբ ալ քաղաքականութեան մը, որուն առաջին պատճառը՝ երկրին տնտեսական եւ վարչական ողբալի սիսթէմը, եւ երկրորդ պատճառը՝ կրօնակից քիւրտերը (կիսանկախ, ռազմիկ եւ հայերէն աւելի բազմաթիւ ժողովուրդ մը) սիրաշահիլն էր: - Իսկ մեր կողմէ՝ մինչեւ ռուսեւթուրք պատերազմն մէկ երկու տասնեակ տարի առաջ, գրեթէ բացարձակ համակերպութիւնն էր թուրքին հանդէպ մեր դիրքը. այդ թուականներուն էր որ մտաւորական արթնութեան շրջանը թեւակոխեցինք եւ սկսանք շատ, **բնականօրեն ու արդարացիօրեն**, անհանդուրժելի գտնել բաներ, որոնց հանդուրժեր էինք մինչեւ այն ատեն. եղա՞ն մեր այդ արթնութիւնը շահագործող օտարներ, անգիտակցաբար շահագործուեցա՞նք,- կարելի չէ որոշապէս ըսել 1877-էն առաջուան շրջանին համար. տարբեր է անկէ վերջը:

Ծանօթ է ռուսեւթուրք պատերազմին, Սան Սթէֆանոյի եւ Բեռլինի դաշնագիրներուն ճակատագրական դերը մեր կեանքին վրայ: Ատկէ վերջ, փոխուեցան այլ եւս հայեւթուրք յարաբերութիւնները (թէեւ ոչ մէկ օրէն միւսը, ոչ այնքան արագ եւ զգալի կերպով) եւ ատացան՝ հետզհետէ՝ թուրք պետութեան կողմէ հայոց հանդէպ յատուկ քաղաքականութեան մը դրոշմը, զոր թուրք ժողովուրդը տեսաւ եւ վերածեց կրօնականէ զատ ցեղային ատելութեան մը, զոր հայ ժողովուրդն ալ տեսաւ եւ անոր դէմ հանեց իր արդարութեան պահանջը, ատոր համար իր յոյսը դնելով օտար պաշտպանութեան վրայ, դաշնագրով իբր թէ իրեն խոստացուած պաշտպանութեա՛ն վրայ: Բայց ան երբեք չյայտնուեցաւ վճռական եղանակով մը եւ իրապէս յօգուտ մեզի, մենք շահագործուեցանք՝ գիտնալով կամ ոչ, ու քանի աւելցաւ մեր յուսախաբութիւնը ու աւելցաւ նաեւ թուրքին ատելութիւնը մեր դէմ, մենք ոմանք՝ մաս մը մեր ժողովուրդէն, փայփայեցինք սա՛ նոր յոյսը՝ թէ զէնքով պիտի ստիպէինք թուրքը տեղի տալ. պիտի ստիպէինք որ միջամտէ Եւրոպան եւ մեզի արդարութիւն ընէ, արդարութիւն՝ պարզ արդարութեան համար, ի վնաս թուրքին եւ ընդդէմ, թերեւս, իր՝ Եւրոպայի շահերուն:

Դարձեալ չափազանց ծանօթ են 1894-էն մինչեւ 1908 պատահած դէպքերն ու տիրող վիճակը, որոնք կը բնորոշէին հայեւթուրք յարաբերութիւնները: 1908 հուլիս 11-24-էն վերջ, յանկարծ փոխուեցաւ կացութիւնը: Մօտ չորս տարի՝ մեղրալուսնի շրջա՛ն մը, հակառակ Ատանայի աղէտին, որ անցեալի մնացորդ մը կամ ապագայի համար խրատական դաս մը համարուեցաւ: Ցետոյ մօտ երկու տարի (1912-14) քիչ մը բացախ խառնուեցաւ մեղրին: Ցետոյ ունեցանք պատերազմի վերջին երեք տարիներուն արհաւիրքը, ջարդերով եւ տարագրութեամբ...:

Փաստ է, սակայն, որ հայեւթուրք յարաբերութիւնները լաւ եղան չորս տարի: Մասնաւորապէս հայ Դաշնակցութեան եւ թուրք Իթթիհատին յարաբերութիւնները: Ա՞յն ատեն չէինք ճանչնար թուրքը՝ թէ - անկէ առաջ, թէ անկէ վերջը... Ո՞վ, որո՞նք եղան, եւ են չճանչցողները:

Այդ անցեալը կարելի է այսպէս խտացնել.- Մենք շուտ արթնացանք, բայց լաւ չարթնցանք: Կէս քուն-կէս արթուն, առանց մեր շրջապատը եւ արտաքին աշխարհը լաւ տեսնելու, վտանգաւոր շարժումներ ըրինք:

շարունակությունը՝ հաջորդ համարում

digitised by A.R.A.R.@

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ

1885 թ.-ից, երբ Մարսելում հիմք դրվեց Մկրտիչ Փորքուզալյանի «Արմենիա» թերթի, սկսում է Ռամկավար ազատական կուսակցության ճամբուի պատմությունը, իրրեւ անբաժան մեկ մասը հայ ժամանակի: Այդ թվականից սկսած հրատարակվել եւ հրատարակվում են ավելի քան 100 թերթեր եւ պարբերականներ աշխարհի տարբեր մասերում, այնտեղ ուր գոյություն է ունեցել հայ հավաքականություն ու ռամկավար կազմակերպություն: Վան, Երեւան, Պոլիս, Թիֆլիս, Բաքու, Փարիզ, Լոնդոն, Ֆրեզնո, Բոստոն, Կանիրեղ, Բեյրութ, Հալեպ, Աթենք, երկար է շարքը այն քաղաքների, ուր գործել է ՌԱԿ-ի ճամբուն իր անխոնջ խմբագիրների, աշխատակիցների եւ, այո, ապարանի բանվորների զոհողությամբ: Գաղափարական իր էությամբ, այն հիմնականում պայքարել է այլամերժության դեմ, ճանուն ժողովրդավարության եւ ազգի գերագույն նպատակների իրականացման համար:

Ստորեւ՝ ոչ ամբողջական մի ցուցակ այդ թերթերի եւ ճանդեսների՝ իրենց հրատարակության վայրով, թվականով եւ խմբագիրներից ոմանց անուններով: Նաեւ՝ այժմ լույս տեսնող ռամկավար 13 թերթերի ցուցակը, որոնց 90-ամյա «Պայքարի» եւ 70-ամյա «Արեւի» կողքին վերջերս ավելացավ վերածնված «Ազգը», այս անգամ արդեն՝ ձայր հողում:

ԹԵՐԹԻ ԱՆՈՒՆ	ԹՈՒԱԿԱՆ	ՔԱՂԱՔ	ԽՄԲԱԳԻՐԸ
1. Արմենիա (Արմենական)	1885-1925	Մարսել	Մկրտիչ Փորքուզալեան
2. Արեգակ	1888	Ծղրտի	Հայկակ Էլինեան
3. Սուրհանդակ	1889-1890	Ծղրտի	Հայկակ Էլինեան
4. Ծաղիկ	1895-1896	Պոլիս	Արշակ Չոպանեան
5. Հայաստան (Ֆրանս. եւ հայ)	1888-1892	Լոնդոն	Սիրուան Սվազլեան
6. Սկաստրիան	1890-1892	Նիւ Եորք	Հայկակ Էլինեան
7. Տիգրիս	1897-1899	Նիւ Եորք	Հ. Էլինեան,Թ.Չարչաֆեան
8. Մարտ (Վեր. Հնչ.)	1897-1901	Լոնդոն	Արմենար Արմենարեան
9. Սեմիրամ	1898-1911	Փարիզ	Արշակ Չոպանեան
10. Նոր Կեանք (Վեր. Հնչ.)	1898-1902	Լոնդոն	Արմենար Արմենարեան եւ ուրիշներ
11. Վաղուան ձայնը	1898	Սանկտ-Պետերբուրգ	Սուրէն Պարթեւեան
12. Ձայն Հայրենեաց (Վ.Հնչ.)	1899-1906	Ս.Ս.Հ.	Յովհ. Յակոբեան, Գ.Շիրճեան եւ ուրիշներ
13. Ձայն Հայրենեաց	1908-1910	Պոլիս	Ս. Սուրեան, Լ. Լարենց
14. Քաղաքացի (ՌԱԿ)	1902-1912	Ֆրեզնո	Հայկ Էլինեան
15. Ակատ խօսք	1901-1907	Ֆրանսա, Եգիպտոս	Ե. Օտեան եւ ուրիշներ
16. Ակատ բեմ (Վեր. Հնչ.)	1903-1907	Եգիպտոս	Ե. Օտեան, Լ. Լարենց
17. Կոչնակ Հայաստանի	1901-1909	Պոսթոն	Վահան Թէքէեան

Այսօր լույս տեսնող ռամկավար թերթերն ու ճանդեսները

18. Շիրակ	1905-1906	Աղեքսանդրիա	Վ.Թէքէեան,Միք.Կիւրճեան
19. Շիրակ	1907-1908	Գահիրէ	Արմենար Արմենարեան
20. Շիրակ	1909	Պոլիս	Վահան Թէքէեան
21. Նոր ժամանակներ	1906	Պոլիս	Երուանդ Օտեան
22. Օրէնք	1905	Պոլիս	Երուանդ Օտեան
23. Ակօս	1907-1921	Ս.Ս.Հ.	Ս. Պարթեւեանեւ ուրշ.
24. Պահակ (Վեր. Հնչ.)	1911-1921	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
25. Ակօս-պահակ (ՌԱԿ)	1921	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
26. Պայքար (ՌԱԿ)	1921-	Ս.Ս.Հ.	Հրաչ Երուանդ, Ս. Ն. Նապար, Անդրանիկ Անդրէասեան, Նուպար Պերպերեան, Գրիգոր Բէօսէեան
27. Արեւ	1907-1908	Գահիրէ	Երուանդ Օտեան
28. Արեւ (ՌԱԿ)	1915-1924	Աղեքսանդրիա	Վ. Թէքէեան
29. Արեւ (ՌԱԿ)	1924-	Գահիրէ	Վ. Թէքէեան, Յովհ. Պողոսեան, Աւետիս Եափուճեան
30. Արծագանգ	1908	Իզմիր	Ս. Պարթեւեան, Հ. Սամուրեան
31. Դաշինք	1908-1922	Իզմիր	Ս. Պարթեւեան, Հ. Սամուրեան
32. Առաւօտ	1909-1922	Պոլիս	Ս. Սուրեան
33. Արագած (Վեր. Հնչ.)	1911	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
34. Ձայն Հայրենեաց (Վ.Հնչ.)	1908-1911	Պոլիս	Հասուչեան, Լ.Լարենց
35. Լուսարձակ	1911-1913	Պոլիս	Հովսէփեան, Գալփագճեան, Դանիել, Երուանդ Օտեան
36. Լուսին	1911	Պոլիս	Գր.Դամբիկեան(Բոնչոն)
37. Սալեղ	1911-1912	Գահիրէ	Խմբ. Մարմին
38. Վան-Տոսպ (Սահմ. Ռամկ.)	1911-1914	Վան	Խմբ. Մարմին
39. Վան-Տոսպ (Սահմ. Ռամկ)	1917-1918	Թիֆլիս	Վ. Պապիկեան, Արտակ Դարբինեան
40. Վան-Տոսպ (Սահմ. Ռամկ.)	1919	Երեւան	Սուրէն Պարթեւեան
41. Դոսանք	1912	Գահիրէ	Խ. Գուրզէթեան,
42. Մարմ	1912	Պոլիս	Լ. Լարենց
43. Լուսաբեր	1904-1908	Գահիրէ	Վահան Թիւրքճեան
44. Սեւ կատու	1912-1913	Պոլիս	Երուանդ Օտեան
45. Սահանայ	1913-1914	Պոլիս	Երուանդ Օտեան
46. Շուշան	1913	Պոլիս	Երուանդ Օտեան, Ս. Պարթեւեան
47. Ռամկավար	1914	Պոլիս	Ս. Տիւկրեան
48. Անապատի Ծուշարձան	1916-1917	Գահիրէ	Ս. Պարթեւեան
49. Հայաստան	1917-1918	Թիֆլիս	Վահան Թոթովենց, Լեւոն Թիւթիւնճեան
50. Հայկաշէն (Վեր. Հնչ.)	1917-1918	Թիֆլիս	Խմբ. Մարմին
51. Երեւան	1918-1920	Պոլիս	Մկրտիչ Կապրաշ
52. Արագած (Վեր. Հնչ.)	1919-1921	Պոլիս	Տ. Դարբինեան, Վ. Շահրիմեան
53. Արոր (Վեր. Հնչ.)	1919-1921	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
54. Երկիր (Ժողովրդ. Կուս.)	1919	Պաքու	Խմբ. Մարմին
55. Ժողովուրդ (Ժողրդ. Կուս.)	1918-1920	Երեւան	Խմբ. Մարմին
56. Զարթօնք	1924	Ալեքսանդրիա	Մարտիրոս Տր Ստեփանեան
57. Ժողովուրդի արծագանգը	1919	Պոլիս	Խմբ. Մարմին
58. Ժողովուրդի ձայնը(Ռամկ.)	1919-1924	Պոլիս	Տ. Յակոբեան, Տ. Թոփճեան
59. Ժողովրդական թերթ (Ժ.Կ.)	1919	Աշխապատ	Խմբ. Մարմին
60. Իգնատ Աղա	1919-1920	Պոլիս	Երուանդ Օտեան
61. Հայ ձայն	1918-1919	Հալէպ	Սեդրակ Վէպէճեան
62. Հայ ձայն (Սահմ. Ռամկ.)	1919-1921	Սուսա	Լ. Սազմեան, Ս. Վէպէճեան
63. Հայաստանի ձայն(Ս.Ռ.)	1919-1920	Երեւան	Արտակ Դարբինեան
64. Նոր կեանք (Ժող. Կուս.)	1919	Ալեքս-պոլ	Տ. Դանիելեան եւ ուրիշներ
65. Շանթ	1919-1920	Պոլիս	Ե. Օտեան, Լ. Շաֆրեան
66. Ժող. ձայն-ժամանակ(ՌԱԿ)	1920-1922	Պոլիս	Խմբ. Մարմին
67. Ժողովուրդի ձայն (ՌԱԿ)	1922-1924	Պոլիս	Խմբ. Մարմին
68. Կիլիկեան սուրհանդակ	1920-1921	Սուսա	Խմբ. Մարմին
69-70. Նոր կեանք-Միտուան, (Ռամկ.) (յետոյ «Նոր կեանք-արոր»)	1920-1921	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
71. Շանթ-Իգնատ աղա	1920-1922	Պոլիս	Լ. Շաֆրեան, Ե. Օտեան
72. Ապագայ (ՌԱԿ)	1921-1949	Փարիզ	Տ. Պողոսեան, Ս. Թէրզիպաշեան եւ ուրիշներ
73. Այսօր (ՌԱԿ)	1954-1955	Փարիզ	Տ. Պողոսեան
74. Ծիածան	1924-1927	Ս.Ս.Հ.	Ս. Ս. Ծոպիկեան
75. Մասիս (ՌԱԿ)	1924-1925	Աղեքս.-Գահիրէ	Խմբ. Մարմին
76. Արարատ (ՌԱԿ)	1925	Սոֆիա	Խմբ. Մարմին
77. Արաժաղ (ՌԱԿ)	1934	Սոֆիա	Խմբ. Մարմին
78. Նոր Ալիք (ՌԱԿ)	1924-1928	Սեւանիկ	Խմբ. Մարմին
79. Սեղու	1923	Սեւանիկ	Խմբ. Մարմին
80. Պահակ (ՌԱԿ)	----	Սեւանիկ	Խմբ. Մարմին
81. Հայկական փենեա	1925-1926	Գահիրէ	Ալ. Սարուխան, Ե. Օտեան
82. Փունջ	1925-1928	Աղեքս.-Գահիրէ	Լ. Սազմեան
83. Եփրատ (ՌԱԿ)	1928-1947	Հալէպ	Տոքթ. Պողոսեան, Ս. Վէպէճեան Ա. Շաքեան եւ ուրշ.
84. Նոր գիր	1938-1951	Ս.Ս.Հ.	Բ. Նուրիկեան, Ա. Սեդրէասեան
85. Զարթօնք	1939	Գահիրէ	Ռ. Շահլամեան
86. Զարթօնք(ՌԱԿ)	1937-	Պէյրութ	Վ. Թէքէեան, Լ. Թիմիճեան, Տ. Պողոսեան, Տ. Դանիելեան, Գ. Սհարոնեան, Տ. Աւետիքեան, Գ. Աղպաշեան
87. Զարթօնք-սիրտ	1955-1956	Պէյրութ	Խմբ. Մարմին
88. Շիրակ	1956-	Պէյրութ	Զարեհ Սեզգինեան, Մնակ Սարգիսեան, Սրմեն Դարեան, Միրաքր Դանիելեան
89. Երկիր (ՌԱԿ)	1957	Սոֆիա	Սասքէ Պետրոսեան
90. Փարոս	1931-1940	Փլովդիվ	Ռ. Մարտիրոսեան
91. Սուրհանդակ (ՌԱԿ)	1960	Պուէնոս Այրէս	Տ. Գնունի
92. Տեսարան	1960	Նիկոսիա	Ս. Վէպէճեան
93. Նոր աշխարհ	1968-	Սոֆիա	Զ. Գրիգորեան
94. Հայ միտք	1956	Փարիզ	Պետրոս Զարոյեան
95. Վերածնունդ (Ս. Ռամկ.)	1912-1913	Պոլիս	Խմբ. Մարմին
96. Վերածնունդ (Ռամկ.)	1919	Երեւան	Խմբ. Մարմին
97. Միտուան (Ռամկ.)	1920-1921	Տփղիս եզ	Խմբ. Մարմին
98. Կէս կատակ կէս շիտակ	----	Փարիզ	Դանիել
99. Նոր արոր (ՌԱԿ)	1926	Ս.Ս.Հ.	Խմբ. Մարմին
100. Մշակ	1913-1920	Թիֆլիս	Հ. Սասքէեան, Լեւ
101. Նոր օր (ՌԱԿ)	1922-	Ֆրեզնո, ապա Լոս Անջելես	Ս. Սեդրէասեան, Գ. Փապազեան, Ս. Հայկենց, Ս. Տէլլեթեան, Ս. Միհասեան, Տ. Պողոսեան
102. The Armenian mirror-spectator	1932-	Նիւ Եորք Պոսթըն	Պոլ Վահան, Գ. Մերկերեան, Արայ Գալայճեան
103. Սուրհանդակ	1960-63	Պուէնոս Այրէս	Տաճատ Գնունի
104. Սարտարապատ	1975-	Պուէնոս Այրէս	Խմբ. Մարմին
105. Ապագայ	1975-	Սոնթրալ	Սրսէն Սամուրեան
106. Էրեբունի	1980-	Լոնդոն	Խմբ. Մարմին
107. Միութիւն	1986-	Միսնի	Խմբ. Մարմին
108. La Lettre de l'A.D.L.	1986-	Փարիզ	Խմբ. Մարմին
109. «Ազգ»	1991-	Երեւան	Տակոր Աւետիքեան

ԹԵՐԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Այո, «Ազգ» թերթն ունի պատմություն, եւ բավական հին ու հարուստ պատմություն: Առաջին անգամ այն հիմնադրվել է Բոստոնում, 1907 թ.-ին, որպես պաշտոնաթերթ Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցության, որ, ինչպես հայտնի է, հետագայում միանալով արեւմտահայ հինգ այլ կազմակերպությունների, 1921 թ.-ին գոյացրեց Ռամկավար ազատական կուսակցությունը:

Սկզբում իբրեւ ազգային, քաղաքական եւ գրական շաբաթաթերթ, ապա երեքօրյա, երկօրյա եւ 1919 թ.-ից՝ օրաթերթ, «Ազգ»-ը լույս է տեսել արեւմտահայ հայտնի մտավորական եւ բանաստեղծ Սուրեն Պարթեւյանի խմբագրությամբ: Այնուհետեւ խմբագրության գործի գլուխ են անցել Արմենակ Նազարեթյանը, Երվանդ Ծյուրիդյանը, Գեւորգ Սաֆարյանը եւ Գարրիել Փափազյանը: 1915-16 թթ.-ին «Ազգ»-ը ունեցել է նաեւ առանձին՝ բացառիկ հրատարակություններ, նվիրված Մեծ Եղեռնին եւ դրա շուրջ միջազգային արձագանքներին:

1921 թ.-ին Սահմանադիր Ռամկավար «Ազգ»-ը միանում է վերակազմյալ հընչակյան «Պահակ» թերթին եւ երկուսը միասին կազմում են «Ազգ-Պահակ»-ը՝ որպես Ռամկավար ազատական կուսակցության Ամերիկայի Արեւելյան շրջանի պաշտոնաթերթ: Արմենակ Նազարեթյանի եւ Երվանդ Ներսիսյանի խմբագրությամբ այն լույս է տեսնում մինչեւ 1922-ը, որպես ազգային, գրական, քաղաքական 8 էջանի օրաթերթ:

Մի տարի անց, 1922-ին, այն դադարում է լույս տեսնելուց, ավելի ճիշտ՝ կուսակցության պաշտոնաթերթի պարտականությունը փոխանցում է «Պայքար» օրաթերթին, որ «Ձայն հայրենեաց» անունով լույս էր տեսնում 1899-ից, Բոստոնում: «Պայքար»ի առաջին խմբագրապետը լինում է փայլուն հրապարակագիր եւ ՌԱԿ-ի մեծ տեսաբան Հրաչ Երվանդը:

Հետեւաբար, «Ազգ», ապա «Ազգ-Պահակ» եւ մյուս կողմից՝ «Ձայն հայրենեաց» թերթերի միությունից 1922 թ.-ին գոյանում է «Պայքար»-ը, որը շարունակում է լույս տեսնել առայսօր, վերջին 8 տարիներից ի վեր՝ իբրեւ շաբաթաթերթ, խմբագրությամբ Գրիգոր Բյոսեյանի:

Ինչպես երեւում է արդեն, մեր թերթի «Ազգ» անունը պատահական չէ: Փաստորեն, նրանով վերածնունդ է ապրում 1907թ.-ին ամերիկյան ափերում գոյատեւած՝ գաղափարական նույն ընտանիքին պատկանող թերթը, արդեն մայրենի հողում:

Մեր բազմաթիվ ընթերցողների հարցին բավարարելու ձգտող մատենագիտական այս հակիրճ տեղեկությունները լրիվ չէին լինի, եթե չավելացնեինք, որ «Ազգ» անունով 1935-1939թ.-ին Փարիզում (Բուլոնյ Սյուր Սեն) լույս է տեսնում մի պարբերաթերթ, որպես պաշտոնաթերթ «Հայ ազգայնական կազմակերպության», Զարգարյան եղբայրների հրատարակությամբ եւ խմբագրությամբ Վիգեն Սեդրոսյան-Շանթի:



«Սոյուզպեչատ»-ի բոլոր բաժանմունքներում եւ փոստատներում շարունակվում է «ԱԶԳ» թերթի բաժանորդագրությունը: Թերթը լույս է տեսնում շաբաթական երկու անգամ:

ԼՈՒՐԵՐ ԵՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԻՀ՝ 69149
1 ամիս՝ 1ռ. 30կ.
12 ամիս՝ 15ռ. 60կ.

ՀԱԶՈՐԴ ամսից թերթն ստանալու համար պետք է բաժանորդագրվել մինչեւ ընթացիկ ամսվա 15-ը:

ԲԱՑԻ ԱՅԴ, եռօրյա «ԱԶԳ»-ը այս տարվա մեջ դառնալու է ԱՄԵՆՕՐՅԱ: Մինչ այդ բաժանորդագրվածների համար բաժանորդագինը չի փոխվի:

digitised by A.R.A.R.@

ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1643 թվականին հոլանդացի դե Փրիզը եւրոպացիներից առաջինն է նկատել բլրաթմբի հարավային վերջավորությունը եւ ընդունել այն որպես Ամերիկայի ծովափ կամ Հոկայդո կղզու մի մասը: Այդ սխալը ուղղել են մոտ 100 տարի անց:

Առաջին եւրոպացին Վլադիմիր Ատլասովն է, որ տեսել է Կուրիլները եւ հասկացել, որ դրանք անհայտ կղզիներ են: 1697-1699 թթ. նա կազակների ջոկատով Ռուսաստանին է միացրել Կամչատկան եւ իմիջիայլոց, հաղորդել է, որ այդ թերակղզուց հարավ, ծովում՝ տեսել է կղզիներ:

1711 եւ 1713 թթ. կազակները գնացել են հյուսիսային կղզիներ: Տեղացիները այները, եկվորների հետ կռվում տանուլ են տվել եւ ստիպված ընդունել Ռուսաստանին հարկ վճարելու պայմանը: Հարցումների միջոցով կազակ Կոզիրեւսկին կազմել է Կուրիլյան կղզիներից մինչեւ Հոկայդո մեզ հայտնի առաջին պատմությունը:

Այդ կղզում ռուսները հայտնվեցին միայն 1739 թվականին: Արշավախմբի հրամանատար Մարտին Շպանբերգն իմացավ, որ այդտեղ տիրում է «ճապոնական խանի» իշխանությունը, իսկ Հոկայդոից հյուսիս ընկած կղզիները զբաղեցնում են ազատ այները: Եւ այդպես Հոկայդոի եւ Հարավային Կուրիլների միջեւ եղած ջրագիծը Պետերբուրգի համար նշանակում էր ռուսական գրավված տարածքների վերջակետը:

1778-1779 թթ. իրկուտսկցի վաճառական Շաբալինը իր ընկերների հետ 1500 այների բերում է ռուսական տարածքներ՝ Հարավային Կուրիլներ՝ Իտուրուպ եւ Կունաշիր եւ անգամ Հոկայդո:

Միայն 1669 թ. Հոկայդոյի այները վերջնականապես ջախջախվեցին, նրանցից շատերը գնացին Սախալինի եւ Կուրիլների իրենց հայրենակիցների մոտ:

Սակայն Կուրիլներում Ռուսաստանի հաջողությունները անհանգստացրին ճապոնական կառավարությանը եւ 1786-1788 թթ. Իտուրուպ եւ Կունաշիր ուղարկվեց զինվորական արշավախումբ:

Ճապոնացիները զարմացել էին, որ տեղացի շատ այներ ընդունել էին ուղղափառությունը եւ սովորել կիրիլիցան: Ղրիմի պատերազմը (անգլո-ֆրանսիական նավատորմը գնդակոծեց Պետրոպավլովսկ-Կամչատսկը եւ Ուրուպ ավանը) ստիպեց Ռուսաստանին ճշտելու իր սահմանները Հեռավոր Արեւելքում: 1855 թվականին նա ստորագրեց Սիմոդյան պայմանագիրը, ըստ որի Իտուրուպը եւ Կունաշիրը համարվում էին Ճապոնիայինը: 1875-ին Ճապոնիան ստացավ ողջ Կուրիլներն այն պայմանով, որպեսզի հրաժարվի Սախալինի նկատմամբ ունեցած հավակնություններից:

Հետագա դիվանագիտական եւ զինվորական սխալների շղթան հանգեցրեց 1905-ի Պորտսմուտի պայմանագրին, որը պսակվեց ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի պարտությամբ: Ճապոնացիների պահանջով 1855 եւ 1875 թթ. պայմանագրերը համարվեցին անվավեր, Ռուսաստանը համաձայնվեց, որպեսզի Ճապոնիան տիրի ողջ Կուրիլներին եւ Սախալինի հարավին:

1945 թվականին, ըստ ծալքայի համաձայնագրի, Խորհրդային Միությունը, Ճապոնիայի դեմ կռվին մի ավանդելու համար, պետք է ստանար Սախալինի հարավը եւ ողջ Կուրիլները: Այդ պատճառով 1946-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը այդ տարածքները հայտարարեց Խորհրդային Միության սեփականություն, առանց հաշվի առնելու Ճապոնիայի կարծիքը: Ճապոնիայի հետ խաղաղ պայմանագրի կնքումը նախատեսված էր 1951 թվականին: Այդ ժամանակ Խորհրդային Միությունը կորցրել էր իր նախկին դաշնակիցների համակրանքը: ԱՄՆ-ի կողմից առաջարկված խաղաղ պայմանագրի նախագծի համաձայն նախատեսվում էր ամերիկյան զորքերը թողնել Ճապոնիայում:

ԽՍՀՄ-ի համար դա անընդունելի կետ էր: Ճապոնիան դեռեւս չէր շտապում ընդունել ԽՍՀՄ-ի Կուրիլներում տիրելու իրավունքը: Ամերիկացիները ցանկանում էին նրան աջակցել, բայց չէին ուզում բացեիբաց խախտել Ճալքայի պայմանագիրը:

Խորհրդային պատվիրակությունը Գրոմիկոյի ղեկավարությամբ ոչ միայն հրաժարվեց ստորագրել այդ պայմանագիրը, այլեւ չփորձեց բարեփոխել ներկայացված տեքստը: Այնուհետեւ, ըստ Սան-Ֆրանցիսկոյի դաշնագրի 2-րդ հոդվածի, Ճապոնիան հրաժարվեց Կուրիլներից եւ հարավային Սախալինից, որը նա ստացել էր Պորտսմուտի պայմանագրով: Թվում էր, թե ԽՍՀՄ-ը ստացավ Ճալքայում խոստացածը: Սակայն պայմանագրի 25-րդ կետը արգելում էր որեւէ իրավունքներ կամ առավելություններ տալ այն պետություններին, որոնք պայմանագիրը չեն ստորագրել:

Ու՞մ օգտին էր Ճապոնիան հրաժարվում Սախալինից եւ Կուրիլներից, անհասկանալի է. եթե ԽՍՀՄ-ի օգտին, ապա նրա ստորագրությունը չկա պայմանագրի տակ...

Ժամանակները փոխվում էին:

1953-ին մեռավ Ստալինը: Այդ տարի վերջացավ նաեւ կորեական պատերազմը: Իսկ 1956-ին Ճապոնիան եւ ԽՍՀՄ-ը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որի համաձայն նրանց միջեւ դադարեցվում էր պատերազմական դրությունը: Բացի այդ, խորհրդային կառավարությունը համաձայնվեց Ճապոնիային տալ Հարբոմաի եւ Շիկոտան կղզիները, բայց միայն խաղաղ պայմանագրի ստորագրումից հետո: «Կուրիլյան պատմությունը» գրեթե մոտ էր իր խաղաղ վերջաբանին, բայց երկու տերությունների միջեւ հարաբերությունները ըսկսեցին վատթարանալ ճապոնա-ամերիկյան «Անվտանգության մասին պայմանագրի» կնքումից հետո, ըստ որի ամերիկյան զորքերը մնում էին Ճապոնիայում: 1960 թ-ին Մոսկվան հայտարարեց, որ եթե ճապոնացիները ստանան Հարբոմաին եւ Շիկոտանը, հնարավոր է, որ այնտեղ հայտնվեն ամերիկյան բազաներ: Այնուհետեւ, բանակցություններ սկսելու փոխարեն, խորհրդային կառավարությունը նորից նույն թվականին հայտարարեց, որ ԽՍՀՄ-ի եւ Ճապոնիայի միջեւ «տարածքային հարցը» վերջնականապես լուծված է եւ հրաժարվեց այդ առթիվ որեւէ այլ պահանջներ ընդունել:



Այսօր Ճապոնիան խաղաղ պայմանագրի համար ոչ միայն պահանջում է Հարբոմաին եւ Շիկոտանը, այլեւ բնակության համար երկու այլ խոշոր Կուրիլյան կղզիներ՝ Իտուրուպն ու Կունաշիրը:

Ճապոնիան իր պահանջները փաստարկում է այսպես. Սան-Ֆրանսիսկոյի պայմանագրում Կուրիլներից եւ Հարավային Սախալինից հրաժարվելը դեռ Խորհրդային միությանը ոչ մի իրավունք չի տալիս, քանզի վերջինս չի ստորագրել այդ պայմանագիրը: Բացի այդ, պայմանագրում չի նշված, թե որ կղզիներն են այնտեղ կոչվում Կուրիլյան: Ճապոնացիների կարծիքով Շիկոտանը, Հարբոմաին, Իտուրուպը եւ Կունաշիրը Կուրիլյան կղզիներ են, իսկ դա նշանակում է, որ Ճապոնիան դրանցից չի հրաժարվել: Ճապոնացիները նշում են նաեւ 1855 թ. Սիմոդյան պայմանագիրը, ըստ որի երկու երկրների սահմաններն անցնում էին Ուրուպ եւ Իտուրուպ կղզիների միջով: Ի պատասխան, մեր դիվանագետները նշում են, որ Սան Ֆրանցիսկոյի պայմանագրի «անհարթությունները» հիմնավորված չեն, իսկ ինչ վերաբերում է Սիմոդյան պայմանագրին, ապա ճապոնական կառավարությունն ինքն է չեղյալ հայտարարել 1905 թ. Ռուսաստանի հետ կնքած նախկին պայմանագրերը:

Բացի դրանից, երկու կողմերն էլ բերում են բազմաթիվ պատմական տեղեկանքներ, որոնցից պարզվում է, որ այդ վիճելի կղզիները միշտ եղել են բուն ճապոնական (ռուսական) հողեր: Այդ հայտարարությունները երկու կողմից անբարոյական են: Հիշենք, որ Կուրիլները այների բուն հողն է: Նրանք այժմ էլ ապրում են Հոկայդոյում:

Սակայն, քանի դեռ չկա «խաղաղ» պայմանագիր, այդ սահմանների փոփոխության հարցը դժվար է պատկերացնել: Բայց մեր երկրի տնտեսական դրությունը ահավոր է, իսկ ճապոնացիները դա գիտեն: Նրանք այդ վիճելի կղզիների դիմաց շատ բան ունեն տալու. 30 ճապոնական բանկեր ավելի շատ դրամ են հանում, քան ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Անգլիայի եւ Իտալիայի բանկերը միասին վերցրած:

ՆԻԿԻՏԱ ԼՈՄԱՆՈՎԻՉ
«Նեզավիսիմայա գազետա», թիվ 42

Le Monde գրում է

ԹԵՏՉԵՐԸ ԽԱԽՏՈՒՄ Է ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՎՐԴՈՎՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ

Անցյալ տարվա նոյեմբերին իր հրաժարականից հետո Թեթչերը առաջին անգամ հրապարակորեն խառնվեց օրվա քաղաքական ամենահրատապ հարցին: Լոնդոնյան իր կացարանում ընդունելով քուրդ կանանց եւ երեխաների մի պատվիրակություն, նա ապրիլի 3-ին վրդովմունքով հայտարարել է, թե պետք է արագ գործել կործանման եզրին գտնվող քուրդ ժողովրդին օգնության հասնելու համար: Այնուհետեւ նա զանգահարել է Ջոն Մեյջորի խորհրդականներից մեկին եւ արտահայտել իր անհանգստությունը: Երեք ժամ հետո պրեմիեր մինիստրը հայտարարեց շտապ մարդասիրական օգնություն ցուցաբերելու մասին:

Թեթչերը ռազմական միջամտության կոչ չարեց: Սակայն նա ակնհայտորեն ցնցված էր քրդերի ջարդի նկատմամբ Սադդամ Հուսեյնի դեմ բանակ կազմած կառավարությունների անտարբերությունից: *«Քրդերը ոչ թե խոսքերի, այլ կոնկրետ գործերի կարիք ունեն: Անհնարին բան չէ այնտեղ վրաններ, սնունդ ու հագուստ ուղարկելը: Մենք պետք է խիստ միջոցներ ձեռնարկած լինենք: Պանը չէ իրավարանական մանվածապատումների: Մենք պետք է այնտեղ գնանք հենց հիմա: Մա փրկության առաքելություն է»*, ասել է նա:

Ջոն Մեյջորը մինչ այդ լռություն էր պահպանում, թողնելով որ արտգործնախարարությունը ինքը տնօրինի արտաքին քաղաքական այդ հարցը, ինչպես որ նրա իշխանության գալուց հետո հաճախ է պատահում: Սակայն վերջին օրերին ձայներ են հնչում այդ անտարբերության դեմ: Թեթչերի ձայնն էլ ավելացավ դրանց:

Անգլիական եկեղեցու մի ծառայող կառավարությանը դիմել է գոնե արգելելու իրաքյան ուղղաթիռներին քուրդ բնակչության վրա կրակել: Նրա պատճառաբանությունը, ինչը շատերն են կիսում, հետեւյալն է. Մեծ Բրիտանիան, ինչպես եւ միացյալ այլ երկրներ, Սադդամ Հուսեյնի դեմ տարած իր հաղթանակով հնարավոր դարձրեց քրդական ապստամբությունը: Այն չի կարող դրա հետեւանքների հարցում ձեռքերը լվանալ: *(Նույնը չէ՞ր արդյոք դարասկզբին, երբ մեծ տերությունները Թուրքիայում հրահրեցին հայկական զինված ապստամբությունը «Թուրքիան ներսից պայթեցնելու» համար, 1915 թ. հետո ձեռքերը լվանալով եւ կողք քաշված հանգիստ դիտելով Հայաստանի հոգեվարքը:- Խ.Հ.)*:

«Ինդեպենդենտ» թերթը այդ մտքին անդրադառնում է իր առաջնորդողում: *«Մենք խորը կերպով ներքաշված ենք այդ ողբերգության մեջ, ուր պատասխանատվության խոշոր բաժին ունենք: Մենք վժռականորեն եւ առանց մեծ վտանգի, միջամտելու միջոցներ ունենք: Այսպես, երկրորդ համաշխարհայինի վերջում, Հիտլերի պարտությունից հետո ձեռքի տակ ունենալով Գերմանիայի մի խոշոր հատված, մենք հանդիսականներ էինք, մինչդեռ էսկնականները իրենց գործն էին ավարտում համակենտրոնացման ճամբարներում»*, գրում է թերթը:

Մեծ Բրիտանիայում հեռուստատեսությամբ սփռված այն պատկերները, ուր Բուշը գոլֆ է խաղում կամ ձկնորսությամբ զբաղվում, ցնցել են հասարակական կարծիքը: Ջոն Մեյջորը այդ ժամանակ հանգստանում էր քաղաքից դուրս եւ ինքն էլ նման քննադատությունների թիրախ դառնում: Վերջապես նա վճռեց շտապ մարդասիրական օգնություն ուղարկել *«մեղմելու համար այդ ողբերգությունը»*:

Սակայն Լոնդոնի պաշտոնական դիրքը շարունակվում է մնալ ցանկացած ռազմական միջամտության մերժումը: Արտգործնախարարության մի պաշտոնյա BBC-ով հայտնել է, թե *«Ձեմ կարծում, թե մենք կարող ենք ուժի դիմել, ինչը կնշանակի բրիտանացի, ամերիկացի կամ ֆրանսացի զինվորներ ուղարկել՝ իրաքին պարտադրելու համար մեր կամենցած քաղաքական լուծումը»*: Բրիտանական կառավարությունը ակնհայտորեն շփոթված է հասարակական կարծիքի ճնշումից, սակայն, ըստ էության, նա որդեգրել է Վաշինգտոնի դիրքը:

ԴՈՄԻՆԻԿ ԴՈՄԲՐԸ
«ՄՈՆԴ», 5 ապրիլ 1991

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մայրահեղ անհրաժեշտությունն ստիպում է, որ միջազգային ընկերակցությունը փոքր-ինչ խախտի իր թանկագին դոգմաները: Անցյալ շաբաթ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը թիւ 688 բանաձեւում նշելով «մարդասիրական օգնության պարտքի» մասին, այս անգամ առաջադրում է նոր գաղափար. ՄԱԿ-ի վերահսկողությամբ Իրաքի հյուսիսում ստեղծել «պաշտպանության գոտիներ»: Այս երկու նորամուծությունների նպատակն է տարագրության ճամփան բռնած միլիոնավոր քրդերին թույլ տալ փրկվելու հալածանքից, որը Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆ. Միտերանի խոսքերով ասած, *«սահմանակցում է ցեղասպանությանը»*:

«Միջնատարածքների» ստեղծումը հալածյալ քրդերին ապաստան տալուց բացի մի նոր փուլ է նշանավորում «մարդկային իրավունքների» բնագավառում, որի առաջին երկու կարեւոր բանաձեւերը ընդունվեցին 1988 եւ 1990 թվականներին: (Մանրը իրավիճակում գտնվող զոհերին անարգել հասնելու մասին եւ մարդասիրական անհետաձգելի «միջանցքների» մասին):

Ամեն դեպքում խոսքը քաղաքականության նկատմամբ բարոյականության գերակայության մասին է, որի նպատակն է օգնել զրկվածներին, սովի կամ քաղաքացիական պատերազմի զոհերին:

Նման միջամտությունը ենթադրում է, որ հրնթացս դիպչում են պետությունների սրբություն սրբոց անկախությանը՝ միջազգային կյանքի երկաթյա օրենքին: Սակայն, ինչպես նշել է Ֆ. Միտերանը, Իրաքի ինքնիշխանությունը հարցականի տակ է դրվում ոչ թե սկզբունքորեն, այլ սոսկ «կիրառությամբ»:

Բանն այն է, որ Իրաքի հյուսիսում, «պաշտպանության գոտիների» ստեղծումը պարունակում է մեկ ուրիշ վտանգ՝ «Ազատ Քրդստանի» ուրվագիծը, որը երկրի մասնատման նախերգանքը կլինի, մի բան, որը չեն ցանկանում ոչ համաշխարհային ընկերակցությունը, ոչ արաբական աշխարհը, ոչ էլ հարեւան երկրներից որեւէ մեկը:

Բայց դժբախտ քուրդ ժողովրդի համար այս օրերին կարեւոր է մեկ բան. ստիպված չլինել ընտրություն կատարելու մահվան կամ տարագրության, ցեղասպանության եւ սփռման միջեւ: Պետություն չունեցող քրդերը վախենում են դառնալ հող չունեցող ժողովուրդ: Նրանց ողբերգությունը որոշ կողմերով հիշեցնում է 1915 թվականին ու դրանից հետո հայերի եւ 40 տարի առաջ պաղեստինցիների ապրածը, որոնց տարագրության դրդեցին քարոզչությունն ու սարսափը: Մի նոր սփյուռք չդառնալու համար նրանք պետք է կառչեն իրենց լեռներին: Միջազգային ընկերակցությունը կարող է եւ պետք է նրանց օգնի:

Խմբագրական
«Մոնդ», 10 ապրիլ 1991

digitised by A.R.A.R.@

«Գնացին նրանք. մենք էլ ենք գնալու: Գալու եք դուք, բայց ձեզանից ետո էլ են գալու»:

ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻՉ.
ԲԱՂԵՀ. 1487թ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

(պատմում է Հայաստանի ԳԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր ՄԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ):

1960-ական թթ. վերջերին մեր ինստիտուտի ժողովրդագետների եւ տնօրինության միասնական ջանքերի շնորհիվ հիմք դրվեց *«Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. նյութեր եւ ուսումնասիրություններ»* մատենաշարի հրատարակությանը: Նպատակը հետեւյալն էր. հայ ժողովրդագիտության օրավուր աճող ձեռքբերումները գիտական ու ընթերցող լայն հանրությանը ծանուցելու հյուսար պարբերաբար հրապարակ հանել ինստիտուտում (նաեւ ինստիտուտից դուրս) կատարված ժողովրդագիտական համակարգված նյութերն ու ուսումնասիրությունները:

Հայ ժողովրդական մշակույթի պատմության մեջ կային արդեն այդ նախաձեռնության լավագույն նախօրինակները, ինչպիսիք էին, դիցուկ, անցյալ դարավերջին Ե. Լալայանի հիմնադրած ու խմբագրած *«Ազգագրական հանդեսը»* եւ այս դարասկզբին Մոսկվայի Լազարյան ճեմարանի կողմից պրոֆ. Գր. Խալաթյանցի խմբագրությամբ հրատարակված *«Էմինյան ազգագրական ժողովածուն»*:

Անցյալի արգասավոր փորձն ու մերօրյա ժողովրդագետների նախաձեռնությունը շուտով տվեցին իրենց գործնական արդյունքները: Ինստիտուտի գիտխորհրդի կողմից հաստատվեց մատենաշարի խմբագրական մարմին՝ կազմված ինստիտուտի ճանաչված ազգագրագետներից ու բանագետներից, կազմվեց հրատարակվող գործերի նախնական ծրագիր: Եվ 1970 թ. լույս տեսավ *«Հայ ազգագրություն եւ բանահյուսություն»* մատենաշարի անդրանիկ պրակը, որն ընդգրկում էր ազգագրագետ Վ. Թեմուրճյանի *«Գամիրքի հայերը»* եւ ամերիկահայ բանասեր Ե. Տեր-Մկրտչյանի *«Վանեցոց հարսանիքը»* աշխատությունները:

Անցյալ շուրջ երկու տասնամյակի ընթացքում լույս է տեսել մատենաշարի 18 պրակ, որոնց մեջ ընդգրկվել են հայ ազգագրության ու բանագիտության հիմնականում արդի, մասամբ եւ անցյալ սերնդի ներկայացուցիչների գրառած նյութերն ու հետազոտությունները: Բավական լայն է ցարդ հրատարակված ազգագրական եւ բանահյուսական նյութերի ընդգրկման ազգա-աշխարհագրական քարտեզը. Գամիրք, Դերսիմ, Տարոն, Վան, Արճակ, Մուսալեռ, Համշեն, Արարատյան դաշտ, Շիրակ, Գեղարքունիք, Արցախ, Նոր Նախիջեւան, Ղզլար, Զավախք: Նույնքան լայն ու բազմաբնույթ են ժողովրդագիտական հետազոտությունների ընդգրկած ոլորտները ու խնդիրները (անասնապահություն, արհեստներ, փոխադրամիջոցներ, բնակարան, սոցիալական խմբեր, ծիսական կենցաղ, նախաքրիստոնեական պաշտամունք, ընտանեկան ծիսակարգ եւ հավատալիք, ժողովրդական թատրոն, երգարվեստ, պարարվեստ, բանագիտության պատմություն):

Երկար ձգձգումներից հետո օրերս հրատարակվեց մատենաշարի հերթական 18-րդ պրակը, որն ընդգրկում է երկու հետազոտություն. Սվ. Վարդանյանի *«Տիգրան Նավասարդյանի ավանդը հայ բանագիտությանը»* եւ Գ. Վարդումյանի *«Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը»*:

Վաղուց պատրաստ եւ գալիք պրակներում իրենց հրատարակությանն են սպասում Տավուշի, Թալինի, Գուգարքի բանահյուսության մերօրյա գրառումների արժեքավոր ժողովածուները: Ցավոք, Հայաստանի գիտությունների ակադեմիայի տպագրական հնարավորությունների սղության պատճառով՝ վերջին տարիներս աննեղելիորեն ձգձգվում է մատենաշարի հերթական պրակների հրատարակությունը: Մինչդեռ սույն մատենաշարը հայ ժողովրդական մշակույթի դարավոր-արդյունքների հրապարակմանն ու դրանց գիտական իմաստավորմանը նվիրված հիմնական հրատարակությունն է մնացել, հետեւաբար արժանի է պետական ու գիտական պաշտոնական մարմինների պատշաճ հոգածությանն ու հովանավորմանը: ■

ՆՎԻՐՈՒՄ՝ ՇԻՐԱԿ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻՆ

«Շիրակ» ամսագրի վերջին համարներում նկատելի է հետաքրքիր բեւեռացում. տարբեր հեղինակներին, այլազան նյութերը «հավաքել» մեկ ակնառու գրական երեւույթի շուրջ: Երեկ այդ երեւույթը Ա. Մառուկյանն էր, այս անգամ (1990թ. օգոստոս-սեպտեմբերի համարում) Մուշեղ Իշխանը, ի դեմս որի *«արեւմտահայ գրականությունը կ'ողջունէ իր մէջ մեր մեծ նահատակներուն հաւատարիմ աւանդապահը»* (Մառուկյան):

Ամսագրում տպագրված են Մ. Իշխանի տարբեր տարիներին գրած ընտիր բանաստեղծությունները, Լ. Վարդանի, Պ. Սիմոնյանի, Գ. Շահինյանի, Գ. Սեւանի, Ա. Սեփեթճյանի հանգամանալից, խորաթափանց վերլուծական հոդվածները, Թ. Թորանյանի *«Երեք հանդիպում Մուշեղ Իշխանի հետ»* հուշապատումը եւ ուրիշ արժեքավոր նյութեր, որոնք գծագրում են բնությամբ եւ աստծով օրհնված բանաստեղծի նկարագիրը, ինչպես նաեւ՝ մարդուն ու հայրենասերին:

20-րդ դարի հայոց բանաստեղծության նոր սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից էր Մուշեղ Իշխանը, որ արդեն անցյալին է պատկանում, իսկ իր գրական վաստակը՝ ներկայինն է եւ ապագայինը նաեւ: Նա ասում էր. *«Մեր ժողովուրդը իր պատմութեան ամէնեն մեայլ շրջաններուն, վառ պահած է միշտ իր հոգիին մէջ գրքին պաշտամունքը, գրքին անփոխարինելի արժէքը եւ արեան գնով պաշտպանած է իր մշակոյթը»:* Նրա բանաստեղծությունն էլ պաշտպանությունն է իսկական գրականության: ■

Լրացավ Հայաստանի Հանրապետության ժողովրդական դերասան ԼԵՒՈՆ ԹՈՒԻԻԿՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը: Արտիստի տաղանդը բացահայտվեց ու հաստատում գտավ Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, որտեղ նա կատարեց Ռիչարդ Երրորդի (Շեքսպիր, «Ռիչարդ Երրորդ»), Մազութի Համոյի (Ե. Զարենց, «Երկիր Նաիրի»), Թափաեռնիկոսի (Հ. Պարոնյան, «Ատամնաբույժն արեւելեան»), Պառատովի (Ա. Օստրովսկի, «Անօժիտը»), Ամիլկարի (Իվ Ժամյակ, «Մրսյո Ամիլկար»), Մամյանի (Վ. Պետրոսյան, «Վերջին ուսուցիչը») Բագրատյանի (Ֆ. Վերֆել, «Մուսա լեռան 40 օրը») դերերը՝ դառնալով ժամանակակից հայ հանդիսատեսի սիրելիներից:



ԲԱՐԻ ԱՆՈՒՆ ԵՒ ՀԻԾԱՏԱԿ

Գեւորգ Ոսկանյանին արվեստակիցները եւ ծննդավայրի մարդիկ անվանում էին Գոգո՝ այս մեկ հատիկ բառի մեջ դնելով իրենց անկեղծ սերն ու հարգանքը նրա նկատմամբ: Բազմաշնորհ Գոգոն դերասան էր, դրամատուրգիական ստեղծագործությունների բեմադրող եւ նկարիչ: Վերջինիս միջոցով առավել արտահայտվեց նրա մարդկային եւ ստեղծագործ հոգու գեղեցկությունը: Նա աշտարակցի էր, հայրենիքի այդ հինավուրց, անզուգական անկյունի բնությանն ու գույներին սիրահարված երգիչ եւ իր ամբողջ կյանքը նվիրեց նրան որդիական ակնածանքով ու խոնարհությամբ:

Եւ ահա լույս է տեսել Գ. Ոսկանյանի լավագույն գեղանկարչական աշխատանքների ալբոմը, ուր տեղ են գտել *«Աշուն»*, *«Աշտարակի ծորում»*, *«Արարատ»*, *«Աշտարակի հին կամուրջը»*, *«Քասախի կիրճը»*, *«Ջմերուկով նատյումորտ»*, *«Մարիեն նկեղեցին»*, *«Համբերդ եւ նկեղեցի»* եւ ուրիշ կտավների գունավոր վերատպությունները, որոնք «պատմում են» արվեստագետի հարազատ բնության չափ գունեղ զգացմունքների մասին: Ժողովրդական նրկարիչ Էդվարդ Իսաբեկյանը նկարներին ուղեկցող իր խոսքում Գոգոյին անվանում է «Աշտարակի ֆենոմեն» եւ նաեւ գրում, թե պետք է ստեղծել Գեւորգ Ոսկանյանի տուն-թանգարան. *«Ինչո՞ւ զրկել Աշտարակը իր ճշմարիտ, հավաստի հիշողությունից, որը կա եւ մնալու է Ոսկանյանի կտավներում եւ որը երբեք այդպիսին չի մնալու, չի լինելու, ինչպիսին Թիֆլիսը Խոջաբեկյանի զարմանահրաշ գծանկարներում է»:*

Գեւորգ Ոսկանյանի ալբոմի տպագրությունը նախաձեռնել են Աշտարակի շրջխորհրդի գործկոմի մշակույթի բաժինը եւ Հայաստանի պետական պատկերասրահը: Արժանի ու գեղեցիկ վերաբերմունք կյանքից անժամանակ հեռացած շնորհալի նրկարչի բարի անվանն ու հիշատակին: ■

ՀԱՆՈՒՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՅՐԵՆԻԻ

Ստեղծվել է ՀՀ Գերագույն խորհրդի գիտության, կրթության, լեզվի եւ մշակույթի հանձնաժողովի *«Հայաստանի հանրապետության օրենքը լեզվի մասին»* նախագիծը: Օրերս այն քննարկվեց ԳԱ գրականության ինստիտուտում: Ելույթ ունեցան Ա. Ղազինյանը, Ս. Սարինյանը, Ա. Զաքարյանը, Գ. Հակոբյանը, Հ. Քենդերյանը, Հ. Բախչինյանը, Ն. Ադալյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Ներսիսյանը, Ս. Շտիկյանը, Հովհ. Բեքմեզյանը, Է. Զրբաշյանը: Բարձր գնահատվեց հայոց լեզվի նկատմամբ պետական ուշադրությունը, որ լեզվի զարգացման կարեւոր ազդակներից է: Բոլոր ելույթ ունեցողները նշեցին «Նախագիծը» կատարելագործելու անհրաժեշտությունը: Տարակարծություններ եղան հատկապես հին կամ դասական ուղղագրության հարցի շուրջ. մեծամասնությունն արտահայտվեց «վերադարձի» օգտին՝ չմոռանալով նշել, որ դա տեւական գործընթաց է եւ ոչ թե հրամայական փոփոխություն: Սրությամբ դրվեց «ազգային լեզվամտածողության» խնդիրը, որն այսօր հնում է բավարար լինելուց: Հարկավոր է դասավանդել գրաբար եւ բարբառներ: Չի կարելի հոգեւոր մշակույթի երեւույթները, այդ թվում նաեւ լեզուն, ներփակել, դա հղի է ազգային ներփակվածության վտանգով,- մասնավորապես ընդգծեց Ա. Ղազինյանը: Մեկ անգամ եւս չսխալվելու համար, ինչպես եղել է անցյալներում, «լեզվի մասին օրենքը», Գերագույն խորհրդում հաստատելուց առաջ, անհրաժեշտ է դարձնել համահայկական քննարկման խնդիր՝ այստեղ ներգրավելով նաեւ Սփյուռքը: Գլխավոր նպատակ պետք է լինի՝ որոնելու այն ճանապարհները, որոնք թե հայրենիքի եւ թե արտերկրի ժողովրդին կհասցնեն մայրենի լեզվի միասնականության: ■

ՀԱՍԱՐՈՍ ՍՅՈՒՆԱԿ

▬ Երկու տարի առաջ ստեղծված «Մոսկովյան ամբիոնը», որի գաղափարական ղեկավարը ակադեմիկոս Անդրեյ Սախարովն էր, վերջերս դիմել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին՝ Սումգայիթի ջեղասպանության առիթով, եւ իր բարոյական պաշտպանությունը հայտնել հայ ժողովրդին: Միեւնույն «Ամբիոնը» նամակ է հղել ԽՍՀՄ պրեզիդենտին՝ վրդովական բողոք արտահայտելով Ղարաբաղի հայության դեմ շարունակվող անարդարությունների վերաբերյալ, պահանջել՝ «անհապաղ վերականգնել ԼՂԻՄ-ի իշխանության պետական կառույցվածքները», «անօրինական համարել վարչատարածքային բաժանումը փոխելու մասին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած որոշումը», ԽՍՀՄ ներքգործնախարարության կորքերին «հանձնարարել խաղաղասիրական, այլ ոչ թե պատժիչ պարտականություններ»:

▬ Հայ ժողովրդի մեծ բարեկամ Բոգդան Գեմբարսկու թարգմանությամբ լեհերեն լույս է տեսել հայ գրականության անթոլոգիայի երկհատորյակը:

▬ Հայաստանի կոմպոզիտորների միությունը Կոմիտասի անվան մրցանակ է շնորհել արգենտինահայ դիրիժոր Խուան Ալմուխանյանին: Ավելի առաջ այդ պատվին արժանացել են սփյուռքահայ երաժիշտներ Ալան Հովհաննեսը, Ալիսիա Թերկյանը եւ Համբարձում Բերբերյանը:

▬ Հայաստանի հանրապետության քուրդ մտավորականների հավաքույթը բողոքի դիմումներ է հղել ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովին, Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆ. Միտերանին, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով քուրդ ժողովրդի դեմ Սադդամ Հուսեյնի վարչակազմի արյունալից գործողությունների վրա եւ կոչ արել պաշտպան կանգնել անմեղ բնակչությանը:

▬ Այս օրերին Հայաստանի ժուռնալիստի տան ցուցասրահում այցելուին է ներկայանում ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, ինժեներ Ե. Սիմոնյանի «Հայաստանի ճարտարապետությունը եւ քանդակագործությունը» ֆիլատելիստական եւ ֆիլոքարտական ուշագրավ ցուցադրությունը: Հեղինակը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում համաստիրա հայ ճարտարապետությանն ու այն շինություններին եւ կառույցներին, որոնց մասնակից են եղել հայ ճարտարապետները: Հավաքածուն բովանդակում է ամենաբազմազան թեմատիկա ունեցող վահանակներ: Նախկին կոնսերվատորիայի շենքը, հին Երեւանի փողոցները, տարբեր ճարտարապետների հետ նամակագրություն, հայկական՝ աշխարհով մեկ սփռված ճարտարապետական, եկեղեցական կառույցներ, բացիկներ, դրոշմանիշներ... Ահա այն ամենը, որ կներկայացնի ձեզ հավաքածուն:

▬ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանի ավանդական ուրբաթներից մեկն այս անգամ երաժշտասերների համար հայտնագործեց եւս մեկ նոր անուն՝ տասնութամյա դաշնակահար Արեգ Սիմոնյան:

Դեռեւս Երեւանի Պ. Չայկովսկու անվան մասնագիտացված երաժշտական դպրոցում

սովորելիս ի հայտ եկան Արեգի ընդգծված ընդունակությունները: Հմուտ մանկավարժ, պրոֆեսոր Ռ. Թանդիլյանը արդեն մի տարի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում իր սանի մեջ սերմանում է դաշնակահարության տեխնիկական հնարավորությունների զարգացման, ձայնարտաբերման, կատարողական վարպետության հատկանիշներ:

Բախ, Բեթհովեն, Բրամս, Ռախմանինով՝ ահա այն հեղինակները, որոնց ստեղծագործությունների կատարմամբ էլ Արեգը հանդես կգա Իսպանիայում կայանալիք միջազգային մրցույթում: ■

Էջի պատասխանատու՝ Նորայր ԱԴԱԼՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԴՄԻՏՐԻ ՎՈԼԿՈԳՈՆՈՎ.
ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»Ն Է

ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր, հայտնի պատմաբան եւ փիլիսոփա Դմիտրի Վոլկոգոնովին հանդիպեցինք Մոսկվայում, ՌԽՖՍՀ ժողպատգամավորների արտահերթ համագումարի ավարտին եւ խնդրեցինք պատասխանել «Ազգի» հարցերին:

- Ինչպե՞ս կբացատրեիք այն իրողությունը, որ պրեզիդենտ Գորբաչովն այդպես էլ չբարեհաճեց գալ եւ մասնակցել համագումարի աշխատանքներին:

- Իրոք, Գորբաչովը մեծ հնարավորություն կունենար շտկել իրավիճակը եւ որոշ զիջողականության հասնել: Նման մասշտաբի քաղաքական գործչի համար կարեւոր է գնալ այնտեղ, որտեղ լարված իրավիճակ է, այլ ոչ թե այնտեղ, ուր փառաբանում են: Թեժ կետերում է վճռվում նրա հեղինակությունը: Պրեզիդենտը պետք է գնա Անդրկովկաս, Օսեթիա, Կուզբաս, այնտեղ նա այժմ ավելի է պետք, քան այստեղ՝ Կրեմլում:

- Արդեն վեց տարի է անցել, բայց Գորբաչովի հռչակած վերակառուցման քաղաքականությունը այդպես էլ չհասցվեց մինչեւ վերջ:

- Երբ վերակառուցումը սկսվեց, մենք չհասկացանք, թե դա ինչ է: Թվում էր, թե միայն ցանկանալը, կադրային փոփոխությունները, օրենքներ ընդունելը բավական են, որպեսզի ամեն ինչ իր հունով գնա: Ես համոզված եմ, որ մեր անցման շրջանը կտեւի 8-10 տարի: Որովհետեւ հասարակության մի դրությունից դեպի մյուսն անցնելը շատ դժվար պրոցես է: Փորձեք հիմա Չինաստանին վերակառուցել: Միայն Լյուքսեմբուրգի նման փոքր երկիրը կարող է արագ վերակառուցվել: Երբ Գորբաչովը ասում էր կվերակառուցվենք, նա չէր հասկանում, թե ինչ էր ասում: Կարելի էր, իհարկե խուսափել եւ՝ արյունից, եւ՝ ազգամիջյան կռիվներից, եւ՝ ծայրահեղություններից: Այս բոլորը կարող էր չլինել: Բացի այդ, ամբողջատիրական պետությունից դեպի դեմոկրատական, քաղաքակիրթ պետություն, ոչ թե 5-6 տարի, այլ երկու անգամ ավելի կտեւի:

- Պատմական տեսանկյունից Խորհրդային Միության ներկա վիճակը արդյոք ունի՞ իր համանմանը:

- Ընդհանրապես, վտանգավոր է համեմատել: Բայց այժմ Խորհրդային Միությունն ապրում է 1917-ի ժամանակաշրջանը: Ըստ էության, դա նույն կտրուկ շրջադարձն է: Որովհետեւ ոչ միայն 1917-ի փետրվարից հետո մեծ հնարավորություն կար անցնելու դեմոկրատական հասարակության, այլեւ 1917-ի հոկտեմբերից հետո: Պարզապես չհասկացան, որ հեղափոխությունը ոչ միայն բոլշեւիկներն են արել, այլեւ ձախ էսէռները: Մեծ հնարավորություն կար ստեղծելու երկկուսակցական պետություն: Բայց եւ՝ առաջինները, եւ երկրորդները դավանեցին սոցիալիզմին: Ճիշտ է, 1918-ին ձախ էսէռները նույնպես թույլ տվեցին մի շարք սխալներ եւ ճնշվեցին: Այնուհետեւ սկսվեց իշխանության մենաշնորհությունը: Այդտեղից էլ գալիս են մեր այսօրվա բոլոր դժվարությունները:

Խոսք չպետք է լինի կոմունիզմի, սոցիալիզմի կամ կապիտալիզմի մասին: Պետք է պայքարել եւ խոսել միայն դեմոկրատական հասարակություն ստեղծելու համար, իսկ հնացած գաղափարախոսությունները թող մնան միայն հասարակական ուսմունքներում:

- Դուք երկրի փրկությունը կապում եք փոխզիջման քաղաքականության հետ: Ո՞րն է այն:

- Այո, մենք այլ ընտրություն չունենք: Պետք է շտապ հավաքվել «կլոր սեղանի շուրջ» եւ քննարկել կոնկրետ գործեր: Գործը դժվարանում է քաղաքական կենտրոնի բացակայության պատճառով: Կան աջ եւ ձախ թեւեր, սակայն կենտրոնը դեռ շատ թույլ է: Մեր «Ձախ կենտրոն» պատգամավորական ֆրակցիան ջանում է այդ բացը լրացնել: Մեր խումբն ունի լիբերալ-դեմոկրատական ուղղվածություն: Լիբերալները միշտ էլ լավ են օպոզիցիայում, բայց ոչ իշխանության գլխում: Նրանց չի բավականացնում հաստատակամությունը:

- Իսկ ինչո՞ւ «Ձախ կենտրոն»:

- Որպես պատմաբան եւ փիլիսոփա կարող եմ վկայել, բոլոր ժամանակներում առաջադեմ բարեփոխությունները իրագործվել են, երբ առաջնորդներն ու հիմնական ուժերը տեղաբաշխվել են կենտրոնից ձախ: Երբ հաղթում էին աջերը կամ ձախերը, դրանից հետո կամ քաղաքացիական պատերազմ էր սկսվում, կամ տեռոր, կամ դիկտատուրա:

Կրոմվելն ու Պետրոս Ի-ը կենտրոնից ձախ էին: Նրանք բավական առաջադեմ էին, բայց բանականությունը երբեք չէին կորցնում: Գորբաչովը կենտրոնից ձախ էր, հետո անցավ կենտրոն, իսկ հիմա էլ գնաց աջ: Ո՞վ պետք է ընդառաջի: Բնական է՝ երկու կողմերը, բայց ավելի հեշտ է այդ քայլը անել նրան, ով ավելի մեծ իշխանություն ունի:

Հավատացեք, պատմությունը մեզ բոլորիս՝ ով ինչ արել է, կտա իր արժանին: Միայն պետք է հիշեցնեմ, որ կյանքում չեն լինում սեւագրություններ, ամեն ինչ գրվում է մաքուր թղթի վրա:

Զրույցը վարեց
ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ԶՎԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ

Ապրիլի 14-ին Թբիլիսիում սկսվեց Վրաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը, որը պետք է լուծի հանրապետությունում պրեզիդենտության սահմանման հարցը: Մոսկվայի վրացական ներկայացուցչությունից ստացած տվյալների համաձայն, պրեզիդենտության սահմանման հարցը գործնականապես կանխորոշված է Գերագույն խորհրդի քաղաքական ուժերի դասավորությունից ելնելով: Ինչպես տեղեկացրեց ներկայացուցչության աշխատակից Վ. Խախունաշվիլին, հավանական է, որ պրեզիդենտի ընտրությունները կկայացվեն 1991թ. մայիսի 26-ին: Մինչ այդ Վրաստանի խորհրդարանի նախագահ Զ. Գամսախուրդիան հավանաբար կունենա արտակարգ լիազորություններ, ինչպիսիք որ Բ. Ելցինին հաջողվեց ստանձնել վերջերս կայացած ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների համագումարին:

Լուսանկարը՝ Լեւոն ԱՐՄԵՆՅԱՆԻ

Ինչպես հայտնեցին Վրաստանի Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնում, խորհրդարանը մինչեւ նոր պրեզիդենտական ընտրությունները Գերագույն խորհրդի նախագահ Զ. Գամսախուրդիային միաձայն ընտրեց պրեզիդենտ: □

ՎՐԱՑ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԱՆԵԼ ՄԻՆՉԵՒ ՀԱՂԹԱՆԱԿ

Շարունակվում է վրաց երկաթուղայինների գործադուլը: Գործադուլային կոմիտեն ներկայացրեց Վրաստանից ԽՍՀՄ ներքին կորքերի լրիվ դուրս հանման պահանջը: Գործադուլը կշարունակվի այնքան ժամանակ, մինչեւ այս պահանջը չբավարարվի:

Ինչպես հայտնեցին ԽՍՀՄ ՆԳՆ մամուլի կենտրոնում, գնացքների ընդունումը դադարեցնելու Վրաստանի ղեկավարության որոշման կապակցությամբ, կանգնեցված են 93 բեռնատար եւ 12 մարդատար գնացքներ:

Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը հեռագիր է ուղարկել Զվիադ Գամսախուրդիային վրաց երկաթուղայինների գործադուլի կապակցությամբ: Այդ գործադուլի հետեւանքով Հայաստան մի քանի օր չեն ժամանում ոչ մարդատար, ոչ բեռնատար գնացքներ, ստեղծվել են բնակչությանը սննդամթերքով ապահովելու դժվարություններ: Հեռագրում հույս է հայտնվում, որ ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով երկու ժողովուրդների շահերը, Վրաստանի Գերագույն խորհուրդը հնարավորություն կգտնի բաց թողնել Վրաստանի տարածքով Հայաստանի համար նախատեսված գնացքները: □

ԼԻԲԵՐԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ

Ապրիլի 13-ին Մոսկվայում բացվեց Խորհրդային Միության լիբերալ-դեմոկրատական կուսակցության (ԽՄԼԴԿ) երկօրյա համագումարը: Համագումարի հիմնական նպատակն է ՌԽՖՍՀ պրեզիդենտության թեկնածու առաջադրել ԽՄԼԴԿ նախագահ Վլադիմիր Ժիրինովսկին:

Կարճ քննարկումից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ Ռուսաստանի պրեզիդենտության թեկնածու առաջադրվեց ԽՄԼԴԿ նախագահ Վլադիմիր Ժիրինովսկին:

«ԻՖ» թղթակցի այն հարցին, թե որքանո՞վ է իրական գնահատում ընտրություններին հաղթելու իր հնարավորությունները, Վ. Ժիրինովսկին ասաց, որ հույս ունի հավաքել ձայների 30 տոկոսը:

«Եթե մեկ չխանգարեն,- նշեց նա:- Իսկ նպաստավոր հանգամանքների դեպքում ես կարող եմ նույնիսկ հաղթել. չէ՞ որ իրավիճակը Ռուսաստանում վատանում է եւ մեղքը մեծամասամբ ընկած է Գորբաչովի եւ Ելցինի վրա: Մարդիկ դա տեսնում են. նրանք հոգնել են քաղաքական առաջնորդների անդադար պայքարից, իսկ ես առաջարկում եմ կոնստրուկտիվ ծրագիր»:

Համագումարին որպես հյուր ներկա գտնվող քաղաքական կուսակցությունների ու շարժումների ցեմտրիստական դաշինքի (սրա մեջ է մտնում է նաեւ ԽՄԼԴԿ) նախագահ Վլադիմիր Վորոնինը «ԻՖ» թղթակցին տեղեկացրեց, որ դաշինքը նույնպես կառաջադրի իր թեկնածուին, սակայն կոնկրետ անուններ չնշեց: □

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԱԿԱՏԻ III ԿՈՆԳՐԵՍԸ

ՏԱԼԼԻՆ. 15 ապրիլի
Մեր սեփ. թղթ. Գայանե ԱՖՐԻԿՅԱՆ

Փետրվարի 13-14-ը Տալլինի «Սակալա» կենտրոնում տեղի ունեցավ Էստոնիայի ժողովրդական ճակատի 3-րդ կոնգրեսը: Բացման խոսքով հանդես եկավ վարչապետ Է. Սավիսաարը: Նա նշեց, որ խնդիրը պետք է լինի ճգնաժամից դուրս գալը եւ անկախության հասնելը: *«Եվ նայելով դրանից, ասաց նա, 4-րդ համագումարը կարող է տեղի ունենալ կամ անկախ Էստոնիայում, կամ տնտեսական քայքայված եւ լրիվ օկուպացված Էստոնիայում»:*

Ելույթներ ունեցան նաեւ սոցիալ-դեմոկրատական, լիբերալ-դեմոկրատական կուսակցությունների, կանանչների շարժման, ժողովրդական անկախության կուսակցության ներկայացուցիչները: Նրանց ելույթները հիմնականում կազմակերպչական հարցերի շուրջն էին:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Մարիո Լաուրիստինն իր ելույթում ասաց, թե ժողովրդական ճակատը պետք է գործընկերոջ հայացքով նայի մյուս կուսակցություններին:

Քննարկվեց շարժումը կուսակցության վերածելու հարցը: Որոշվեց այն թողնել որպես շարժում:

Նշվեց նաեւ անցումային շրջանն ավարտելու հնարավոր պայմանները:

Վերջում տեղի ունեցավ հանրահավաք՝ ի պաշտպանություն բոլոր գործադուլավորների:

Համագումարի ավարտին հանդիպեցինք ժողովրդական ճակատի վարչության անդամ **Ռաֆիկ Գրիգորյանին** եւ խնդրեցինք պատասխանել «Ազգ»ի հարցերին:

- Շնորհավորում եմ ձեզ ժողովրդական ճակատի ներկայացուցիչների խորհրդի կազմում կրկին ընտրվելու առթիվ: Ասացեք, խնդրեմ, ո՞ր շրջանն եք ներկայացնում:

- Ես Էստոնիայի ժողովրդական ճակատի Տարտուի բաժանմունքի պատվիրակն եմ: Մեր՝ «ռուսական» կոչվող բաժանմունքում բազմիցս դրվել է այն հիմնահարցը, թե պետք է մշակվի ազգային քաղաքականության կոնկրետ ծրագիր: Այդ քաղաքականությունը կոչվում է «ռուսական», որովհետեւ Էստոնիայի ազգային փոքրամասնությունների մեջ հիմնական մասը կազմում են ռուսները:

- Ի՞նչ հիմնական խնդիրներ արծարծվեցին համագումարում:

- Նախ, պետք է լուծել քաղաքացիության հարցը, ապահովել ոչ էստոնացի բնակչության սոցիալական պաշտպանվածությունը, թույլ տալ որպեսզի սեփականաշնորհման քաղաքականությանը մասնակցի նաեւ ոչ էստոնացի բնակչությունը: Դրանից կախված կլինի նաեւ բոլորիս ապագան: Կամ կլինենք ընդհանրապես ոչ մի իրավունք չունեցող քաղաքացիներ, կամ էլ կունենանք իրավունքներ եւ ինչպես մյուսները՝ ինքներս կերաշխավորենք մեր ապագան: □

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԾԱՆԱՊԱՐՀՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՉՀԱՍԱՆ ՂԱՐԱԲԱՂ

«Ինտերֆաքս»ի սեփական թղթակիցը ԼՂԻՄ-ից հաղորդում է, որ կրկին չհաջողվեց ստեփանակերտցի լուսատեխնիկների համար շատ անհրաժեշտ բեռը հասցնել Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտի լուսատեխնիկական գործարանը, որը մի ժամանակ հսկայական ձեռնարկություն էր, թողարկում էր լուսամփոփներ եւ այլ էլեկտրաապրանքներ, շրջափակման պատճառով արդեն երկու տարի է շարունակական դողէրոսքի մեջ է: Մի քանի անգամ ընդհատվել է արտադրության թողարկման ծավալը, երկու-երեք անգամ՝ աշխատողների աշխատավարձը: Եւ ահա, մի քանի օր առաջ Երեւանից ղարաբաղցիների հասցեով ուղարկվել են որոշ մեքենամասեր եւ այլ նյութեր: Սակայն այդ բեռը հասել է մինչեւ ադրբեջանական Գյանջա քաղաքը: Իմանալով, թե ուր են գնում մեքենաները, տեղի միլիցիան կրանց արգելել է շարունակել ճանապարհը: □

«Հայերը սիրում են, որ իրենց իշխեն»

սկիզբը 1-ին էջում

Ինչպես հաճախ է պատահում, այս անգամ եւս թուրքավարի վերլուծելով հայերի վարքագիծը ուզում են «հոգ տանել» նրանց մասին: *«Ղարաբաղում իշխանություն չկա, բացատրում է Կարաեւը: Եւ քանի որ չկա, դրա համար հայերն իրենց անկարգ են պահում: Բայց հայերը սիրում են, որ իրենց իշխեն»:* Ու որպես ապացույց բերվում է օդանավակայանի օրինակը. քանի որ այստեղ օմօնականներն են իշխում, կարգ-ուկանոն է հաստատված, հայերը հլու հնազանդ եիթարկվում են, նույնիսկ իրենց խնդրել են, որ օգնեն Երեւան թռչելուն: (Ի դեպ, անօրինական եւ ուժը կորցրած են համարում Ստեփանակերտ-Երեւան տոմսերը, դրանց վրա պետք է գրվի Խոջալու-Երեւան):

Լաչինի ՕՄՕՆի ղեկավար Սավադովի ծամծմված խոսքն այն մասին է, թե հայերը հոգնել են եւ ուզում են հաշտվել, բայց վախենում են «մորուքավոր ավազակներից»: Նա հայտնում է, թե ռադիոյով լսել են, որ հայերի կողմից խոսել են ֆրանսերենով:

Լսելով բացվող ճանապարհների մասին (որ երբեք էլ փակ չեն եղել ադրբեջանական կողմի համար), տեսնելով Ստեփանակերտի օդանավակայանի վրա ծածանվող կանաչ եւ կիսալուսնով դրոշը, ամենուր արագ թափով ծավալվող շինարարությունը, նայելով Ստեփանակերտի նոր պարետատան, Դուդարեւին եւ մարզային պարետատան, քաղաքաշինի վարիչ Պոլոզովի հայտարարությունների (ըստ որի՝ ճանապարհները անպայմանորեն բացվելու են), ոչ մի լավ բան չես սպասում: □

Լուրերը պատրաստեցին մեր սեփական թղթակիցները եւ Interfax

AZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010
phone: 58-18-41, fax: (8-852)56-2941
Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ՝ 69149:
Mac կոմպիւտերային ձեւաւորումը՝ Ռ.Ա.Կ. մամլոյ եւ լրատուական գրասենեակի

digitised by A.R.A.R.@